Azg
Ազգ
11 ՅՈՒՆՈՒԱՐ 2008 ՈՒՐԲԱԹ 4 (3898)

Ճշգրտվել է համանախագահների այցի ժամանակացույցը

Հայտնի է դարձել ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահների տարածաշրջան կատարելիք այցի ժամանակացույցը: Հաղորդվում է, որ նրանք հունվարի 13-15-ը կլինեն Բաքվում, 15-18-ը՝ Երևանում, 18-21-ը՝ Ստեփանակերտում, իսկ 21-22-ը՝ Թբիլիսիում: Ինչպես ԱՐԱ գործակալությանը հայտնել են Մինսկի խմբի ֆրանսիացի համանախագահ Բեռնար Ֆասիեի գրասենյակից, հակամարտության կողմերը համանախագահներին իրենց վերադարձումներն էին հայտնել այցի նախնական ժամկետների առնչությամբ, սակայն միջնորդները ընդունել են, որ ժամանակացույցի փոփոխությունը հարմար չէ իրենց, եւ միայն որոշակի ճշգրտումներ են կատարել դրանում: Հայաստանի արտգործնախարար Վարդան Օսկանյանը հայտարարել էր, որ համանախագահների այցի երջանակող ժամկետները՝ հունվարի 13-14-ը, Հայաստանի համար «հարմար չեն»:

Որքա՞ն են մեզ խաբում վաճառողները

Թերակշռումներն ամենատարածված խախտումներն են

ԳՈՌՇԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Վաճառքի կետերում ամենատարածված խախտումներից թերակշռումն ավելի խիստ երանգներ է ստացել հատկապես ամանորյա օրերին կատարված առեւտրի ժամանակ: «Սպառողների իրավունքների պաշտպանություն» հասարակական կազմակերպությունը (ՀԿ) բողոքներ է ստացել սպառողներից, որ, օրինակ, մեկ կիլոգրամ նարինջ է գնել, բայց պարզվել է, որ իրական քաշը 6-7 հարյուր գրամ է եղել: Որքան էլ սպառողները չեն վստահում կշեռքներին եւ գնում կատարող յուրաքանչյուր մարդ իր մեջ համոզված է, որ թերակշռում են իրեն վաճառածը, այնուամենայնիվ վաճառողները գտնում են խորամանկ ուղիներ եւ անգամ էլեկտրոնային կշեռքի դեռոյում խաբում ժողովրդին:

«Փաստարկ» ակումբում երեկ հյուրընկալված «Սպառողների իրավունքների պաշտպանություն» ՀԿ նախագահ Աբգար Եղոյանը ահազանգեց սպառման ոլորտում տիրող համաստաած թերակշռումների մասին՝ միաժամանակ նշելով, որ 2007-ին սնուցաչափվել է հանրապետությունում օգտագործվող կշեռքների ընդամենը 30 տոկոսը: Աբգար Եղոյանի գնահատմամբ, մեր տնտեսության մեջ կարծես թերակշռումը գնագոյացման գործոն է դարձել, (թերակշռման հաշվին ավելի շատ են գումար աշխատում), իսկ եթե ոլորտում որեւէ մեկը չի խաբում, նա մրցունակ չէ, քանի որ մյուսները խաբելու են:

Տես էջ 2

ԵՍԻԿ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Գերտ-Հինրիխ Արենսին ցանկանում է հանդիպել բոլոր թեկնածուների հետ

ԵԱՀԿ դիտորդական առաքելության ղեկավար դեսպան Գերտ-Հինրիխ Արենսին լրագրողներին հայտարարել է, որ ընտրություններում կարեւոր է ՁԼՄ-ների դերը: Այս մասին նա խոսել է նաեւ ՀՀ ԱԳ նախարարի եւ ԿԸՀ նախագահի հետ հանդիպման ընթացքում: «Ես ցանկություն ունեմ հանդիպելու նաեւ նախագահի բոլոր թեկնածուների, դասական իշխանությունների եւ այցելելու երգանների մեր երկարաժամկետ դիտորդներին», ասել է ԵԱՀԿ դիտորդական առաքելության ղեկավարը: ԵԱՀԿ դիտորդական առաքելության կազմում բացի հիմնական մասնագետներից, ընդգրկված են 28 երկարաժամկետ դիտորդներ, որոնք հունվարի 15-ից կգործուղվեն հանրապետության տարբեր երգաններ: Հաղորդվեց, որ ընտրություններից անմիջապես առաջ Հայաստան կժամանեն 250 կարճաժամկետ դիտորդներ, որոնք կհետեւեն ընտրական տեղամասերի բացմանը, քվեարկությանը, քվեթերթիկները հաշվելուն եւ արդյունքների ամփոփմանը: Գերտ-Հինրիխ Արենսին նշեց, որ նախքան փետրվարի 19-ի ընտրությունները ԵԱՀԿ դիտորդները մասնակից են հանդես գալ 2 միջանկյալ զեկույցով, ընտրությունների նախորդ օրը կներկայացնեն իրենց նախնական գնահատականը, վերջնականը՝ ընտրություններից 2 ամիս անց:

Մահացել է Մանուկ Գասպարյանը

Հունվարի 10-ի առավոտյան սրտի անբավարարությունից կյանքի 59-րդ տարում մահացել է «Ժողովրդավարական ուժի» կուսակցության նախագահ Մանուկ Գասպարյանը: Մանուկ Գասպարյանը ծնվել է 1949 թվականի սեպտեմբերի 16-ին Սպարանի շրջանի Քասախ գյուղում: 1976-ին ավարտել է Մոսկվայի ինժեներաշինարարական ինստիտուտը, 1989-ին՝ Բելգորոդի Սպառողական կոոպերացիայի ինստիտուտը: Մասնագիտությամբ տնտեսագետ էր: Մ.Գասպարյանը եղել է Ազգային ժողովի 2 գումարումների պատգամավոր՝ 1999-2003, 2003-2007-ին:

«Ժողովրդավարական ուժի» կուսակցության նախագահ Մանուկ Գասպարյանի հոգեհանգիստը տեղի կունենա հունվարի 11-ին, ժամը 17-ից, Գերեզմանի 20 հասցեում (Ընթրում թաղամաս, «Պեժո» խանութի մերձակայքում): Հունվարի 12-ին թաղման թափորը կշարժվի ժամը 14-ին, նույն հասցեից:

«Ազգը» ցավակցում է Մանուկ Գասպարյանի ընտանիքի անդամներին, մտերիմներին, հարազատներին:

Հայ գործարարները լավատեսների ցանկում

Համաձայն «Գլոբալ Թրանզիտ Ինթերնեշնլի» հրատարակած Միջազգային գործարար զեկույցի, հայ գործարարները լավատեսությամբ են նայում իրենց ապագային: Հարցվածների 61 տոկոսը լավատեսորեն է տրամադրված 2008-ի տնտեսական զարգացումների նկատմամբ: Հաղորդվում է, որ արձանագրվել է լավատեսության 4%-ի աճ նախորդ տարվա համեմատ, ինչը գերազանցում է համաշխարհային միջինը +42%: Այս ցանկում ամենալավատեսը Ֆիլիպինցի եւ հնդիկ գործարարներն են 95%-ով, իսկ հոռետեսը ճապոնացիներն են - 44%-ով:

Ռոբերտ Քոչարյանը Փարիզում

Հայաստանի նախագահի մամուլի կենտրոնից հաղորդել են, որ նախագահ Ռոբերտ Քոչարյանը երկօրյա մասնավոր այցով մեկնել է Ֆրանսիա՝ Փարիզի ակնաբուժական կենտրոններից մեկում հետազոտվելու համար:

Չիլինգարովին հերոսի կոչում շնորհվեց

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հրամանագրով Պետդումայի նախկին փոխնախագահ, հայտնի բեւեռախույզ Արթուր Չիլինգարովին շնորհվել է Ռուսաստանի Դաշնության հերոսի կոչում՝ անցած տարի Հյուսիսային բեւեռում ստորջրյա գիտարշավին մասնակցելու համար: 2007 թվականի օգոստոսին գիտարշավի մասնակիցները հյուսիսային բեւեռում «Միր» սուզանավով հասան օվկիանոսի հատակը եւ մեծ ծավալի գիտական աշխատանք կատարեցին: Նույն հրամանագրով հերոսի կոչում է շնորհվել նաեւ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ Անատոլի Սագալեւիչին եւ Եվգենի Չերնյաեւին:

Վաղվա «Ազգ. Մտակույթ-հավելվածում»

Ի պատասխան «Գրական թերթում» վերջերս տպագրված մի համախոսականի, Գրիգոր Աճեմյանը ներկայացնում է «Մակբեթը չի լվանում իր ձեռները» հրատարակումը: «Լուսեղեն ճամփի անցորդը», այսպիսին է պոլսահայ տաղանդավոր բանաստեղծ Զահրաթը գրականագետ Յուրի Խաչատրյանի դիմանկար-էսսեում: Ավելացում ազգային ինքնության պահպանման եւ միջազգայնացման միտումների խաչմերուկային իրավիճակ: Արդի հայ կերպարվեստի զարգացումները՝ Պողոս Հայթայանի տեսադաշտում: Հալեպահայ գրող, հրատարակագիր Թորոս Թորանյանը ներկայացնում է վերջերս երեւանում լույս տեսած Էդուարդ Գրիգորյանի «Մենակը» վեպը: Մելանյա Բաղալյանի գնդրադարձը փիլիսոփա, լեզվաբան «Вся жизнь-подготовка к рождению» գրքին: Գերմանիայի մեր թղթակից Անահիտ Հովսեփյանի հարցազրույցը միջազգային բեմերում հաջողություններ արձանագրած երգչուհի Կարինե Բաբաջանյանի հետ:

Բուշի երջայցը պայմանավորվում է պաղեստինա-իսրայելական բանակցությունները խթանելու առաքելությամբ

Սակայն դրա բուն նպատակը տարածաշրջանի երկրների բեւեռացման հետագա խորացումն է

ՀԱՅԿԱՆ ՕՀԱՆՅԱՆ

Հունվարի 9-ին Սուիտակ տանը Նախագահ Բուշն ընդունեց Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլին, ճաշկերույթ տվեց վերջինիս պատվին, ապա երջայցով ուղեւորվեց Մերձավոր Արեւելք: Սա 7 տարվա պատասխանատու ընթացքում ԱՄՆ նախագահի առաջին երջայցն է տարածաշրջան: Նա հունվարի 9-ին երուսաղեմում հանդիպել է Իսրայելի վարչապետ Էհուդ Օլմերտին եւ նախագահ Շիմոն Պերեսին, իսկ հունվարի 10-ին Ռամալլայում՝ Պաղեստինի ինքնավարության ղեկավար Մահմուդ Աբբասին եւ վարչապետ Սալամ Ֆայադին, ընդ որում, հրաժարվելով այցելել Յասեր Արաֆաթի շիրմին:

Երուսաղեմում վարչապետ Օլմերտի հետ հանդիպմանը նախագահ Բուշը Մերձավոր Արեւելքում մնալուն խաղաղության հասանելիության համար նվիրվածություն է պահանջել իսրայելական եւ պաղեստինյան կողմերից, գոհունակությամբ է նշել, որ նրանք հավասարապես ձգտում են Պաղեստինի անկախ պետության ստեղծմանը: Այնուհետեւ ԱՄՆ նախագահն ընդգծել է. «Իրանը շարունակում է սպառնալ աշխարհի խաղաղությանն ու միջազգային հանրությանը»:

Տես էջ 8

Հանրապետական նշանակության ճանապարհները կավելանան

Մարզային եւ համայնքային նշանակության 224 կմ ճանապարհներ երեկվանից, կառավարության որոշմամբ, կունենան հանրապետական ճանապարհների կարգավիճակ: Դա նշանակում է, որ այդ ճանապարհների պահպանության եւ շահագործման պատասխանատվությունը կկրեն ոչ թե մարզպետարանները, այլ տրանսպորտի եւ կապի նախարարությունը, որպես կառավարության լիազոր մարմին: Այս մասին երեկ լրագրողներին հայտնեց տրանսպորտի եւ կապի նախարար Անդրանիկ Մանուկյանը: Նա նշեց, որ այդ ճանապարհները, ունենալով կարեւոր նշանակություն, սակայն, հավանաբար միջոցների սղության պատճառով, մարզպետարանների կողմից անհրաժեշտ ձեւով չէին պահպանվում: Մինչդեռ նախարարությունը ճանապարհների պահպանման եւ շահագործման հանձներ հայտնաբերում է եռամյա ժամկետով մրցույթներ եւ դրանք շահած կազմակերպությունները պատասխանատվություն են կրում ճշխատանքների որակի համար: Նույն պատասխանատվությունն ունեն նաեւ ճանապարհներ նորոգող ընկերությունները՝ ասֆալտի եւ կապարած ասֆալտանոների որակի համար:

Տրանսպորտի եւ կապի նախարարը հայտնեց, որ Հայաստանի ճանապարհների ընդհանուր երկարությունը մոտ 7700 կմ է: Դրանից մոտ 1560 կմ-ն միջպետական նշանակության ճանապարհներն են, 1830 կմ-ն՝ հանրապետական, իսկ մնացած մոտ 4300 կմ-ն՝ մարզային եւ համայնքային նշանակության: Անդրանիկ Մանուկյանի տեղեկացմամբ, միջպետական ճանապարհները նորոգված են, հանրապետական ճանապարհների մեծ մասը նույնպես, իսկ մարզայիններն ու համայնքայինները՝ ոչ: Այս տարվա պետական բյուջեով 5,7 մլրդ դրամ է հատկացված 103 կմ գյուղական ճանապարհների նորոգման համար: «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրով նախատեսվում է նորոգել 273 կմ ճանապարհ, Ասիական զարգացման բանկի միջոցներով՝ 107 կմ, իսկ ծառոնական կառավարությունից ակնկալվող 136 մլն դոլարով նախատեսվում է 2009-ից նորոգել 880 կմ ճանապարհ: Նախարարը նաեւ տեղեկացրեց, որ անցյալ տարի միջպետական նշանակության ճանապարհները, հիմնականում շնորհիվ Մեղրի-Քաջարան նոր ճանապարհի կառուցման, ավելացել են 125 կմ-ով:

Ինչ վերաբերում է համայնքայինից կամ մարզայինից հանրապետական դարձող ճանապարհներին, ապա դրանք մի քանի գյուղեր իրար եւ մայրուղուն միացնող ճանապարհներ են, իսկ միայն գյուղերն իրար կապող ճանապարհները մնալու են մարզային նշանակության: Անդրանիկ Մանուկյանը հավաստիացրեց, որ կառավարության ծրագրի համաձայն, մինչեւ 2012 թվականը Հայաստանի ամբողջ ճանապարհային ցանցը պետք է նորոգված լինի:

Կառավարության հասցեաթ մեկ այլ որոշմամբ ճանապարհների կահավորումը՝ գծանշումը, ճանապարհային նշանների տեղադրումը, պետք է կատարվի նոր չափանիշներին համապատասխան: Օրինակ՝ նախատեսվում է նաեւ լուսարձակներ տեղադրել որոշ ճանապարհների հաճախ մառախլապատ դարձող հատվածներում:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«Ռուսական երկաթուղին» շատ լավ առաջարկ է արել»

Հավաստիացրեց տրանսպորտի եւ կապի նախարարը

Այս տարվա հունվարի 8-ին բացվել է «Հայկական երկաթուղու» կառավարման միակ հավակնորդ «Ռուսական երկաթուղու» ֆինանսական առաջարկների փաթեթը, ըստ որի, վերոնշյալ ընկերությունը միայն կոնցեսիայի համար Հայաստանի պետական բյուջե պետք է մուտք գործի 1,7 մլրդ դրամ: Տեղեկացնելով այս մասին, երեկ տրանսպորտի եւ կապի նախարար Անդրանիկ Մանուկյանը նշեց, որ ներդրումների առաջարկը ռուսական ընկերությունը ներկայացրել էր դեռ անցյալ տարվա դեկտեմբերի 21-ին: Համաձայն դրանց, «Ռուսական երկաթուղին» առաջարկել էր 570 մլն դոլարի ներդրումներ կատարել «Հայկական երկաթուղում», որից 230 մլն դոլարը՝ կառավարման առաջին տարում, եթե Հայաստանի հաղորդակցության ուղիները մնան նույն վիճակում՝ շրջափակված: Եթե շրջափակումը բացվի եւ ապրանքն նաեւ Սարբեյանի ու Թուրքիայի ուղղությունները, ապա այդ ներդրումների ծավալը կհասցվի մինչեւ 2,3 մլրդ դոլարի:

Ռուսական ընկերության ներդրումային առաջարկները տրանսպորտի եւ կապի նախարարը բնութագրեց որպես «շատ լավ», որի շնորհիվ կնորոգվեն հայկական երկաթուղու վատթար հատվածները, դեռեր. տերմինալները եւ կնորացվի շարժակազմը: Ռուսական ընկերությունը, բացի ներդրումներից, հարկերից եւ պետական տուրքերից, նախատեսում է «Հայկական երկաթուղու» կառավարման յուրահանչյուր տարում ստացած հասույթի 2 տոկոսը փոխանցել պետական բյուջե: Կառավարման 30-րդ տարում ակնկալվում է, որ այդ՝ հասույթի 2 տոկոս գումարը կհասնի 38 մլրդ դրամի: Իսկ երկաթուղին կառավարման հանձնելու վերջնական որոշումը կընդունվի հունվարի 16-ին:

ՖՈՏՈԼՈՒՐ

Անդրանիկ Մանուկյանը հայտնեց նաեւ, որ սկսած 2001-ից «Հայկական երկաթուղին» աշխատում է շահույթով: 2007-ին ընկերությունը փոխադրել է 3 մլն տոննա բեռ 2006-ի 2,7 մլն տոննայի դիմաց, մինչդեռ անցյալ տարի «Արարատոսկոց» հանմարտ չէր տեղափոխվում: Վերջինիս տարեկան ծավալը կազմում էր 800 հազար տոննա:

Ա. Մ.

Որքա՞ն են մեզ խաբում վաճառողները

1-ին էջից

Հասարակական կազմակերպության նախագահի խոսքով, մեր բնակչությունը էլեկտրոնային կշեռքներին ավելի է վստահում, քան մեխանիկական կշեռքներին, բայց վաճառքի կետերում լավ գիտեն նաեւ էլեկտրոնային կշեռքների «հնարավորություններն» օգտագործել, ինչի արդյունքում էլեկտրոնային կշեռքները «խաբում են» 200-300 գրամ: Ամենուրյա առեւտրի ժամանակ, եթե կշեռքները լցեռակտեին, Արգար Եղոյանի կարծիքով, ապրանքների գներն իրենց իրական գնից մոտ 30 տոկոսով ավելին կլինեին:

ՀԿ նախագահի տվյալներով, հանրապետությունում գնահատվող սուբյեկտների մոտ գրանցված է մոտ 25 հազար կշեռք, որոնցից սակայն անցած տարում ստուգաչափվել են միայն 6 հազարը: «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն, հանրապետությունում օգտագործվող կշեռքների պարտադիր ստուգաչափում պետք է իրականացվի առնվազն տարին մեկ անգամ: Բայց ինչպես վերը նշվածից հասկացվեց, օրենքը հանգիստ շրջանցվել է: Ստուգաչափված կշեռքների օգտագործման համար սահմանված է 50-100 հազար դրամ տուգանք, որը սակայն նախորդ տարում, ՀԿ նախագահի տվյալներով, չի կիրառվել որեւէ մեկի նկատմամբ:

Արգար Եղոյանը նշեց, որ փողոցում մանրածախ առեւտրի ժամանակ օգտագործվող ձեռքի կշեռքները, կամ ինչպես ընդունված է ասել՝ բեզմենները, եւս թերակշռում են 300-500 գրամ: Նշենք նաեւ, որ փողոցային առեւտրում օգտագործվող կշեռքները ստուգաչափված չեն եւ հիմնականում հաշիվ ցածր են կշռում: Այսինքն, պետք է ստուգվեն նաեւ կշռաքարերը, որոնք եւս անվստահելի են եւ խաբում են գնորդներին: Սպառման ոլորտում հաճախադեպ թերակշռումների այսօրվա վիճակը, ՀԿ նախագահի համոզմամբ, խաթարում է առդար մրցակցությունը եւ գների արհեստական իջեցում ստեղծում:

«Սպառողների իրավունքների պաշտպանություն» ՀԿ-ն առաջիկա օրերին 4 կետից բաղկացած առաջարկությունների փաթեթ է ներկայացնելու առեւտրի եւ ծառայությունների զարգացման նախարարությանը: Առաջարկներում ընդգրկված է նաեւ ստուգիչ կշեռքը կրկին գործածության մեջ դնելու ավանդույթի վերականգնումը: Սակայն այն կշեռքներն են, որ նախկինում եղել են վաճառքի կետերում, ուստի սպառողը հնարավորություն է ունեցել կշռելու եւ դարձելու իր գնած սննդի իրական քաշը:

«Եթե ինձ համոզեն, որ ընտրակեղծիքներ չեն լինելու, միասին կգնանք մոմ վառելու»

Վազգեն Մանուկյանը առայժմ կարող է բացել միայն 21 շտաբ

«Մեզ մոտ տեղի ունեցավ այն, ինչ տեղի ունեցավ Տաջիկստանում: Մենք ազգային խնդիրների առաջնահերթության կարգով մտածող ժողովուրդ ենք եւ պատշաճ ենք այս երկիրը: Տաջիկստանում երկու կլան, յուրաքանչյուրը ամբողջատիրության ձգտումով, սկսեց պահանջել եղածը: Եղան ներկլանային պայքարներ, որոնց հետեւանքով զոհեր եղան եւ զոհեր եղեց Տաջիկստանը եւ մինչեւ հիմա ուշի չի գալիս: Հայաստանում, քանի որ ունենք կոնկրետ նշանաբաններ, կոնկրետ նպատակներ՝ միավորված Արցախի գաղափարը, ընդհանրապես արժանապատիվ ապրելու մեր դարավոր երազանքը, այս կլանային երեւույթը այդ պահին չձեւավորվեց: Բայց ռեսուրսների բաշխումը գնաց ղեկավարող կուսակցության մերձավորների հետ՝ ցեղական կլանային կամ բարեկամական կլանային: Եվ իշխանությունները, քանի որ ուրիշ լծակներ չունեին, սկսեցին հենվել մարդկանց վրա, որոնք զենք ունեին, որոնք զինված էին եւ հարուստ էին իշխանություններին պատասխանել», ահա այսպիսի բնորոշում տվեց ՀՀ նախագահի թեկնածու Վազգեն Մանուկյանի շտաբի պետ **Սամվել Շահինյանը** հանրապետությունում ձեւավորված վերաբաշխման մեխանիզմին: Սամվել Շահինյանը կարծում է, որ միայն Վազգեն Մանուկյանի ղեկավարությամբ կարող են այդ կարծրատիպերը հալեցնել, վերածել այնպիսի մի երկրի, որը հավասարհավասար իրավական դաշտում տոչալացում չի ունենա, ժողովրդի համար էլ կապահովի նորմալ զարգացում:

Վազգեն Մանուկյանը 21 շտաբ կարող է այսօր բացել հանրապետությունում, բայց նպատակ ունեն յուրաքանչյուր մարզի համար գոնե կենտրոնացված շտաբներ բացելու: «Եթե խոսում ենք ժողովրդավարության մասին եւ նայում ենք Վազգեն Մանուկյանի շտաբի հնարավորությունները՝ անհամեմատելի են: Բայց պետությունը կոչված է հավասար պայմաններ ստեղծելու բոլորի համար: Սացվում է, որ եթերում երկու-երեք հրաշագեղ հաղթական գործիչներ են, իսկ մյուսների համար մուտքը փակված է: Գյուղեր հավանաբար քիչ կգնանք, կուղարկենք ձայներիզներ, մեր ելույթները, գրքեր, բրոշյուրներ. դա է ճիշտ ճանապարհը այս պահին», ասում է Շահինյանը:

Իսկ թե ինչ ընթացքի մեջ է դասական գործընթացը, որ Վազգեն Մանուկյանը հայտարարել էր «Հայկական ժամանակ» թերթի գլխավոր խմբագիր Նիկոլ Փաշինյանի նկատմամբ, Շահինյանը պատասխանեց. «Շատ ավելի անձնավորված է այդ խնդիրը եւ կուզեի, այդ հարցին հենց ինքը՝ Վազգեն Մանուկյանը պատասխաներ: Վազգեն Մանուկյանին լավ ճանաչելով՝ խորհուրդ կտայի լրագրողներին լրագրողական հետաքննություն անցկացնել՝ ինչպես «Դարաբաղ» կոմիտեի, այնպես էլ Սամվել Շահինյանի նախկին դասավանդություններ, ինչպես նաեւ Շավարշ Քոչարյանի հետ կապված ձերբակալումները, որոնք արխիվում են. կտեսնեմ, որ այստեղ ծախվողներ ու գործ տվողներ չկան»:

Վազգեն Մանուկյանի նախընտրական շտաբն ունի հինգ հոգուց բաղկացած խորհրդատվական մարմին, որը նաեւ որոշում է հիմնական ռազմավարությունը: Մարտավարությունը իրականացնում են Շահինյանի ղեկավարությամբ, կուսակցության երկրորդ դեմքերի հետ: Շտաբում ներառված են տարբեր ուղղություններով ղեկավարներ՝ 12 հոգուց բաղկացած:

«**Ազգի**» հարցին, թե Սամվել Շահինյանը ընտրությունների ժամանակ ակնկալո՞ւմ է, որ կլինեն ընտրակեղծիքներ, պատասխանեց. «Երբ շրջաններում մարդկանց էի հավաքում, հարցնում էին՝ փող տալո՞ւ եք, մեզ: Ժողովրդի մեջ կա այն կարծիքը, թե փող է բաժանվելու, դա նշանակում է կիայնվեն ավանդույթներ: Կարծում եմ, այս ընտրությունները մի քիչ ավելի ազնիվ կլինեն, մի քիչ ավելի արդար եւ դա պայմանավորված է վախով, որ մենք կարող է վաղը հայտնվենք կոլապսի մեջ, շրջափակման, քաղաքական արհամարհանքի անդունդում՝ բառացիորեն. եւ որեւէ սեղանի մոտ նստելու իրավունք անգամ չենք ունենա մեծերի հետ»:

«**Ազգ-ի** մյուս հարցին՝ ինչպես է Շահինյանը վերաբերվում օտար երկրներում հայ քաղաքացիներին ընտրելու իրավունքից զրկելուն, ասաց. «Ես կողմ եմ դրան. դրսում ապրող հայերի ձայները փոփոխելը ավելի հեշտ է: Դեսպանատուն են մտնում մի 200 հոգի, փակում են դռները եւ այնտեղ մի 10000 ձայն ում ասես, որ կասն: Ամենեին էլ ծեռնտու տարբերակ չէ դրսում գտնվող մեր քաղաքացիների համար՝ տեխնիկական տեսանկյունից. զուտ բարոյական եւ իրավական տեսանկյունից մեծ հարված է, որ Հայաստանի քաղաքացին չի կարողանում մասնակցել ընտրություններին: Ես զարմացած կլինեմ, եթե ընտրակեղծիքներ չլինեն: Բայց եթե ինձ համոզեն, որ ընտրակեղծիքներ չեն լինելու՝ երդվում եմ ազնվությամբ, միասին կգնանք մոմ վառելու, որ վերջապես խելքի՞ են եկել»:

ՆԱՐԻՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Ընտրակալություն

Խորին երախտագիտությունս եմ հայտնում «Արմենիա» հանրապետական բժշկական կենտրոնի գաստրոենտերոլոգիայի բաժանմունքի վարիչ Սուսաննա Անանյանին եւ ողջ բուժանձնակազմին՝ իմ նկատմամբ ցուցաբերած հոգատար եւ մարդկային վերաբերմունքի համար:

ԱՐԿԱԴԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ,
Արցախյան դատերազմի
մասնակից
Ք. Վանաձոր

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 01 տարի
Գլխավոր եւ հիմնադիր
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հարությունյան 47
Ֆաքս 374 10 562863
e-mail azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱՀՈՒ ԱՐՇԱԿՅԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՒՅՐ ՅԱՀՈՒԲՅԱՆ / հեռ. 529221
Հասցեատիրոջ (գրասենյակ) / հեռ. 582960
Լրագրողական սենյակ / հեռ. 581841
Հանձնարար. խմբագիր / հեռ. 582483
Շտաբային լուսանկար ծառայություն / հեռ. 529353
Հանձնարարական բաժանմունք
«Ազգ» թերթ
Թերթի նիթերի անբողջական եւ մասնակի արտադրումները տրպագիր ձեւերի միջոցով կամ ռադիոհեռուստատեսությամբ առանց խմբագրության գրաւոր համաձայնության խստիւ արգելւում են
Հաշվանշ ՀՀ հեղինակային իրավունքի մասին օրենքի
Նիթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տարով յորդածները գրվագային են, որոնց բովանդակության համար խմբագրությունը պատասխանատուություն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Harutpetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱՔՍԱ-ի փոխհատուցումների 11 մլն դոլարի համար Հայաստանից դիմել է 3840 մարդ

«Ես համոզված եմ, որ հայց ունեմ Կալիֆորնիայի Կենտրոնական շրջանի ԱՄՆ շրջանային դատարանի «Քյուրկյան եւ այլք» ընդդեմ ԱՔՍԱ-ի եւ այլոց դատական գործ թիվ CV 02-01750» եւ «Ուզունյան եւ այլք» ընդդեմ ԱՔՍԱ-ի եւ այլոց դատական գործ թիվ CV 05-02596» խմբային դատավարության կնքված համաձայնագրի մասին»: Ահա այս տողով սկսվող 3840 դիմում Հայաստանից ուղարկվեց Լոս Անջելես, Kyukjian, et. al, v. AXA, S.A., et. al., and Ouzounian, et.al., v. AXA, S.A., et. al., AXA Settlement Claim Fund, 900 Wilshire Blvd., Suite 614, Los Abgeles, CA 90017 հասցեով:

Ըստ AXA ֆրանսիական բանկը ցեղասպանության զոհերի ապահովագրական գումարներից մուտք 11 մլն դոլար կփոխհատուցի նրանց ժառանգներին՝ լուսն առաջին անգամ Հայաստան էր բերել փոխհատուցման գործով զբաղվող «Կառուցես եղիայան եւ փաստաբանական խումբ» իրավաբանական գրասենյակի տնօրեն Բարսեղ Գարթայանը անցած տարվա գարնանը: Լուրը մեծ հետաքրքրություն առաջացրեց, Բարսեղ Գարթայանը հետագայում եղավ «Ազգի» կայքէջի հյուրը եւ պատասխանեց ապահովագրիների ենթադրյալ ժառանգների բազմաթիվ հարցերին՝ ներկայացնելով դատական կարգով փոխհատուցումները ստանալու եւ կարգավորող հանձնաժողովին դիմելու կարգը: Այնուհետեւ բացվեց www.armenianinsurancesettlementaxa.com կայքը, որտեղ ներկայացված էին ապահովագրիների մոտ 7 հազար ազգանուն, դիմելու պայմանները եւ անհրաժեշտ փաստաթղթերի պահանջը:

Դիմելու սկզբնական ժամկետ էր նշանակված 2007 թվականի հոկտեմբերի 1-ը: Սակայն ընթացքում պարզ դարձավ, որ Հայաստանի մարզերի բնակիչներն իրազեկման պակաս ունեն եւ չեն հասցնում դիմել: Դիմելու ժամկետը դատարանի որոշմամբ երկարաձգվեց մինչեւ 2008 թվականի հունվարի 7-ը: Հայաստանի առաջադասության նախարարությունում ստեղծվեց իրավախորհրդատվական հանձնաժողով, որն անվճար սկսեց խորհրդատվություն տրամադրել, կազմել դիմումները եւ պատվիրած փոստով ուղարկել Լոս Անջելես: Ծախսերը առաջադասության նախարարության բյուջեից էին, ի դեմ, առաջադասության նախարարությունն այդ շնորհակալ գործն առանց որեւէ նյութական ակնկալիքի արել է նաեւ նախորդ՝ «Նյու Յորք լայֆ ինշուրնս»-ի փոխհատուցումների դեպքում՝ կարետրելով գործընթացի հաղթական նշանակությունը:

Առաջադասության նախարարի խորհրդական **Թամարա Շահարյանը «Ազգի»** հետ զրույցում պատմեց, որ դիմումների ընդունման վերջին ժամկետը նախարարությունում անցած տարվա դեկտեմբերի 20-ն էր, բայց հաղթահարելու իրենց անձնական նախաձեռնությամբ կարող էին մինչեւ հունվարի 7-ն ուղարկել դիմումները:

Երեւանից ու մարզերից, այդպիսով, 3840 դիմում են ուղարկել: Ըստ Թ. Շահարյանի, այնուամենայնիվ եղան մարդիկ, ում դիմումները ուղարկել չեն հաջողել, բայց դիմեր մինչեւ դեկտեմբերի 21-ը դիմել են՝ նրանց դիմումներն ուղարկվել են: Մի քանի դեպք գրանցվեց, որ մարդիկ հեռու մարզերից էին եւ ինչ-որ պակաս փաստաթղթեր պետք է բերեին՝ այդպես էլ չբերեցին, նման դիմումներ մնացել են, իսկ դիմումատուները տեղեկացվել են, որ իրենց անփութության պատճառով դուրս են մնացել գործընթացից:

Թեեւ գործով զբաղվող փաստաբանական գրասենյակի ներկայացուցիչը խոսացել էր ապահովագրությունների տեսակների բնակության վայրերի մասին տեղեկություն տեղադրել կայքում, ինչը կհեշտացներ հարազատի անունը փնտրելը, սակայն դա տեղի չունեցավ:

Ինչ բարդություններ ծագեցին մարդկանց հետ աշխատելիս: Ըստ Թ. Շահարյանի՝ բարդ էր այն պատճառով, որ մարզերում հարցով զբաղվող գրասենյակներ չկային. եթե լինեին՝ հաղթահարների համար հեշտ կլինեին: Օրինակ, ժամկետի վերջին օրերին, երբ հաղթահարները պետք է գային, սեղմագրերն իրենց դիմումը՝ ճանապարհները փակ էին, ձյուն էր, դժվարանում էին: Եթե դիմումները մարզերում հավաքվեին, դիմումներն ավելի շատ կլինեին, այս մասին է խոսում նաեւ այն փաստը, որ ժամկետի վերջին ամսին՝ դեկտեմբերին դիմումները շատացել էին.

«Մեր առաքելությունն ավարտվեց, մենք ուղղակի օգնեցինք դիմումները լրացնելու, կազմելու, փաստաթղթերը բավարար լինելը ստուգելու հարցում, եւ պատասխանատվություն չենք կրում դիմումների հետագա ընթացքի համար, իսկ հաղթահարների հետ գրասենյակներն իրենք են լինելու կողմ մեջ», տեղեկացրեց Թ. Շահարյանը:

ՄԱՐԻԵՏԱ ԽԵՉՈՅԱՆ

Փնտրվում են այգու ծառահատողներ

Գնողին ապասում է «բանգլադեշցիների» եւ բնասերների «երախտագիտությունը»

«Իմանալիք՝ ոմն է մեր այգու ծառերը հատում, իր ձեռի սղոցով ոտքերը կտրոցնելիս»: Նման պատասխանատվությամբ մեզ դիմավորեցին Մալաթիա-Սեբաստիա համայնքի Ա3 թաղամասի Սվաճյան 14 հասցեի մի խումբ բարձր դասարանցի տղաներ, որոնք փորձեցին լույս սփռել վերջին օրերին տարածված լուսվության վրա, ըստ որի 50-ից ավելի ծառերի հատումներ են կատարվել Մալաթիա-Սեբաստիա համայնքի Վ. Զատիկյանի անվան այգում («Ազգն» այս թեմային անդրադարձել է իր նախորդ երկու համարներում): Տղաները պատասխանատու ցույց են տալիս ու բարձրաձայնում իրենց ենթադրությունները ծառահատումների վերաբերյալ: Ըստ նրանց, ծառերը սղոցել են գիշերով, էլեկտրական սղոցով: Տարել են խոշտանգելով ու գցել են բեռնատար մեքենան, որի անիվների հետքերը ձյան վրա պարզ երեւում են: Ծառահատումը մի քանի գիշերում կատարվել է դեկտեմբերի 20-ից հետո՝ մինչեւ ձյունը դնելը, եւ շարունակվել նաեւ տոնական օրերին: Տղաները ցույց են տալիս սղոցված մեկ-երկու տարվա ծառերի կոճղերը: Դրանց փոշին, որ նստած է ձյան վրա, փաստում է, որ ձյունը դնելուց հետո էլ են ծառերը սղոցվել: Հատված ծառի մի մեծ ճյուղ էլ ոռնագործները թողել են փողոցի երկայնքով ցրված կրակների մոտ:

«Ծառերը տարել են, որ վառեն», «Վատություն են արել համայնքի թաղամասին, որ ամենայն հոգատարությամբ մասնակցում է ծառատունկին եւ հետեւողական է այգու բարեկարգ վիճակին», «Երեւի կտրում են, որ հետո էստեղ օբյեկտ սարեն», «Չէ, մի ուղղությամբ չեն կտրել, ցանցառ են կտրել՝ այգու տարբեր հատվածներից», հակադարձում է մեկը: «Դժվար թե վառելիքի համար տանեին: Շատ են տարել, մի մարդու համար 50-70 ծառը շատ-շատ է»: Ի դեմ, այգու հատված ծառերը այնքան էլ հեռու չէին «Մալաթիայի փեսի բազար» կոչվածից: Մեզ մարդիկ տեսան, ովքեր կոճղեր էին հատում: Մեր զրուցակիցները անհավանական համարեցին տարբերակը, թե փայտը տարել են հենց վառելափայտ վաճառողները, ասելով՝ նրանք հատատ էղոիսի բան չէին անի:

Տղաներն ափսոսանքով են հիշում. «Ծիրանի են կտրել, մենք ուտում էինք այդ ծառերի բերքը, ամառները ծառերի սվերի տակ զովանում էինք, թթվածին էինք ընչում»: Թե ոմն է ոռնագործության հեղինակը, տղաները դժվարանում են պատասխանել, սակայն համոզված են, որ ոչ ոք իրենց շենքից ու հարեւան շենքերից իրեն թույլ չէր տա նման չարագործության միջոցով վայելել վառարանի ջերմությունը:

Խորհենք միջին տարիքի մարդ է: Նա շներ ունի, որոնց ամեն առավոտ տանում է այգի՝ զբոսանքի: Նկատելով մատչամ ծառերի կոճղերը, նա տեղյակ է պահում թաղի տղաներին, որ ուշադիր լինեն եւ բռնեն ծառահատողներին: Նա մեզ պատմեց Սուրիկ անունով մի պահակի մասին, որը գիշերը տեսել է ծառահատողներին եւ մոտեցել ու ամոթանք տվել նրանց: Սակայն չորս տղաները բռնել են առաջացած տարիքի պահակին եւ օձիքից քաշելով գցել ձյան մեջ ու փախել, երբ Սուրիկը ձեռը գրպանն է տարել՝ սպառնալով, թե հիմա ձեզ գնդակոծելու եմ: Ի դեմ, հենց նույն այդ հարգարժան Սուրիկն է ահազանգել «Շանք» հեռուսաբնկերություն, դիմել թաղամասական, որպեսզի ոռնագործությունը կասեցվի եւ մեղավորները պատժվեն: Մեզ մոտ ասեցին, մինչ Սուրիկ անունով պահակի աշխատանքային ժամը սկսեր, որ մանրամասնություններ ճշտեն: Սակայն, ցավոք, նրան գտնել չհաջողվեց:

Ցնցված խոսակցություններ են շրջում, թե իբր հատված մատաղ ծառերն ու շիվերը պահել են Սվաճյան փողոցի դիմացի, այսինքն, այգու մյուս թեւին գտնվող շինհրապարակներից մեկում:

«Եթե ուզենան, գողերին կարող են բռնել, քանի որ այգին շրջապատված է այնպիսի օբյեկտներով (գիշերային ակումբ, ավտոկայանատեղի, խանութներ, տաքարան, գազի լցակայան), որոնք բոլորն էլ պահակներ ունեն», ասում է խորհենը եւ վստահորեն պնդում, որ անգամ դեկտեմբերի 31-ի գիշերը նա է հսկել:

Այգուն կից կրպակներից մեկում տիկին Լենան հաց է վաճառում: «Առավոտ 8.30-ից մինչեւ 23.00-ն էստեղ եմ», ասում է նա եւ անհիանում ծառերը հատողներին: «Կյանքս կտամ էս ծառերի համար, բա չիմանայի՞ ով է արել, տանկացնեի», բարկանում է կինը:

ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԱՅՍՕՐ

Այսօր

◆Ժամը 12.00-ին «Փաստարկ» ակումբում նախընտրական զարգացումների վերաբերյալ ասուլիս կտա Գալուստ Սահակյանը:

◆Նույն ժամին «Արմենիա-Մարիոթ» հյուրանոցի «Տիգրան Մեծ» սրահում տեղի կունենա Լեւոն Տեր-Պետրոսյանի մամլո ասուլիսը:

◆Ժամը 12.00-ին «Հայելի» ակումբի հյուրն են նկարիչների եւ կինոգործիչների միությունների նախագահները:

◆Ժամը 13.00-ին «Ազգային միաբանություն» կուսակցության կենտրոնական գրասենյակում կներկայացվի Արտաշես Գեղամյանի նախընտրական «Արարման ծրագիրը»:

◆Մեկ ժամ անց ՄԱԿ-ում տեղի կունենա ճնարկում՝ «ՁԼՄ-ների ազատության եւ բազմակարծության ապահովման խնդիրները եւ երաշխիքները ՀՀ նախագահի ընտրարշավում» թեմայով: Զեկուցումներով հանդես կգան ՕԵԿ-ից Հեղինե Բիշարյանը, ՀՅԴ-ից՝ Ռուզան Առաքելյանը եւ ՀՀԿ-ից՝ Արտակ Զաքարյանը:

◆Ժամը 14.00-ին «Արմենիրեսի» մամուլի սրահում ասուլիսով հանդես կգա ՀՀ նախագահի թեկնածու Առամ Հարությունյանը:

◆Ժամը 16.00-ին Մոտ Մկրտչյանի թատրոնում (Խորենացի 18) տեղի կունենա ՀՀ զինկոմիսարիատների համակարգի կազմավորման 85-ամյակին նվիրված միջոցառում:

◆Ժամը 17.00-ին Վահան Հովհաննիսյանը երեւանի Մոսկվայի տանը հանդիպում է ունենալու բուժաշխատողների հետ:

Կողմնորոշիչը բարեկեցությունն ու սոցիալական զարգացումն են

Երեկ հրավիրած մամուլի ասուլիսում ԼՂՀ սոցաշխատանքի նախարար **Նարինե Ազատյանն** ամփոփելով նախորդ տարում գեղատեսչության կատարած աշխատանքը՝ դրական գնահատեց կատարվածը. նշելով, որ կյանքի են կոչվել սոցիալական ոլորտին առնչվող այն հիմնական խնդիրները, որոնք նախատեսված էին ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի նախընտրական ծրագրով: Դրանք արտացոլվել են նաեւ 2008 թվականի պետական բյուջեում:

Նախարարի խոսքով, 2008-ի սոցապահովության ոլորտում նախատեսվում է կենսաթոշակների տոմարի՝ ըստ խավերի դրանք համապատասխանաբար սահմանվելով 33-ից մինչեւ 68 տոկոս: Մասնավորապես, աշխատանքային կենսաթոշակը նախորդ տարվա 14.150 դրամի փոխարեն կկազմի 23.800 դրամ: Ի տարբերություն Հայաստանի Հանրապետության, որտեղ թոշակները տվյալ ամսվա համար արդեն տրվում են ամսվա սկզբից, ԼՂՀ-ում դրանք առայժմ տրվելու են հաջորդ ամսվա սկզբներին, ինչը հասանելի է գործող օրենսդրությանը: Ն. Ազատյանը չբացառեց, սակայն, որ ՀՀ-ում կիրառում գտած նոր կարգը առաջիկայում կիրառվի նաեւ Դարաբաղում:

Առաջին անգամ ԼՂՀ պետական բյուջեով հատկացվում է չաշխատող մայրերի համար հղիության ու ծննդաբերության նպաստ 115.000 դրամի չափով: Իբրեւ պետական աջակցություն նորաստեղծ ընտանիքներին՝ յուրաքանչյուր ամուսնացող զույգի կտրվի 300.000 դրամ: Անկախ այն բանից, թե քանի նոր ամուսնություններ են գրանցվելու հանրապետությունում, պետբյուջեով նախատեսված է 450 միլիոն դրամ, տեղեկացրեց նախարարը:

Վերանայվել է ծնելիության խթանման ծրագիրը, համաձայն որի՝ ընտանիքներում յուրաքանչյուր երրորդ երեխայի ծնվելու դեպքում նրա մորը կհատկացվի 500.000 դրամ միանվագ գումար: Եվս այդքան գումարի շրջանակում նորածնի անվամբ բանկում կբացվի նպաստակային ավանդ: Չորրորդ եւ հաջորդ ծնունդների պարագայում այդ գումարի չափը կավելացվի, կազմելով 700.000 դրամ:

Լրագրողներին հետաքրքրում էր՝ ԼՂՀ-ում կա՞ աղքատության նիշ, եւ արդյոք ճշգրիտ է, թե որքան մարդ է Դարաբաղում գտնվում այդ նիշից ցածր: Ն. Ազատյանը բացասական պատասխան տվեց, նշելով, որ ԼՂՀ-

ում առ այսօր նման հետազոտություններ չեն արվել: Դրանով պայմանավորված՝ դժվար է ասել, թե ներկայումս քանի մարդ է Դարաբաղում աղքատության սահմանից ցածր պայմաններում:

Անդրադառնալով գործազրկության վիճակին, նախարարը տեղեկացրեց, որ անցյալ տարի 566 մարդով նվազել էր գործազուրկների թիվը, եւ այդ միտումը շարունակվում է: Կատարվում են վերլուծություններ տվյալ ուղղությամբ, եւ վիճակը լրիվ ուսումնասիրելուց հետո միջոցներ կձեռնարկվեն գործազրկությունը հնարավորինս նվազեցնելու համար:

«Ազգի» այն հարցին, թե բացի պետական բյուջեի շրջանակներում իրականացվող ծրագրերից՝ ինչ ծրագրեր են նախատեսվում բարեգործական խողովակներով, Նարինե Ազատյանը պատասխանեց, որ կառավարությունում ստեղծվել է բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով, որն անցյալ տարվա վերջին հաստատել է 18 ծրագիր: Դրանք ունեն հեռանկարային բնույթ եւ կիրականացվեն այս տարվանից:

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

Հայ մանուկների պատվաստման հիմնադրամին՝ 10 հազար դոլար

Հայ մանուկների պատվաստման հիմնադրամը Ամանորի նախօրեին հաճալրեց իր միջոցները 10 հազար ԱՄՆ դոլարով, որը հատկացրել է «Կիրակոս եւ Կիրակոս» իրավաբանական գրասենյակը: Այս նվիրաբերությունը ուղղված կլինի մանկական հիվանդությունների կանխարգելման համար պատվաստանյութերի ձեռքբերմանը: Մարկ Կիրակոսը Լոս Անջելեսի հայ համայնքի ակտիվ անդամ է, ինչպես նաեւ ոսկրածուծի դոնորների համահայկական ռեեստրի նախագահ եւ «Հայաստան» հիմնադրամի հոգաբարձուների միջազգային խորհրդի անդամ:

Ն. Մ.

Հավելավճարներ գիտնականներին

Կառավարության որոշմամբ ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական եւ գիտատեխնիկական գործունեության ծրագրերում ընդգրկված գիտաշխատողներին գիտական աստիճանի համար 2008-ի հունվարի 1-ից սահմանել են հավելավճարներ՝ գիտությունների դոկտորին՝ 20000 դրամի, գիտությունների թեկնածուին՝ 10000 դրամի չափով:

Ա. Մ.

Վերլուծություն

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Կդառնա՞ Վրաստանը ՆԱՏՕ-ի անդամ

Անցած կիրակի Վրաստանում անցկացված նախագահական ընտրություններն այդ երկրի համար կարեւոր էին նաեւ այն բանով, որ համաժողովրդական քվեարկության էր ենթակայացվել երկու հարց՝ ցանկանո՞ւմ են արդյո՞ք վրացիները, որ իրենց երկիրը դառնա ՆԱՏՕ-ի անդամ, եւ համաձա՞յն են, որ խորհրդարանական ընտրությունները անցնեն այս տարվա գարնանը: Թեեւ հանրաքվեի արդյունքները վերջնականապես ամփոփված չեն, փորձագետները չեն կասկածում, որ երկու հարցերին էլ բնակչության մեծ մասը դրական պատասխան կտա: Եվ այսպես, մի կողմ թողնելով ընդդիմադիր խնդիրները, անդադար առնչվում ՆԱՏՕ-ի անդամ դառնալու հանրաքվեին: Գաղտնի չէ, որ Վրաստանը վաղուց է ձգտում դառնալ Հյուսիս-ատլանտյան դաշինքի անդամ, սակայն այդ հարցի քննարկումը հանրաքվեի միջոցով հետաքրքրական քաղաքական քայլ է, որը ՆԱՏՕ-ի անդամ դառնալու համար պարտադիր պայման չէ, առավել եւս մի երկրի համար, որը նույնիսկ հրավեր չունի այդ կառույցին անդամակցելու: Սակայն Արեւմուտքին ամեն գնով դուր գալը Վրաստանի քաղաքական էլիտայի համար դարձել է գերնպատակ, եւ եվրոպականացող վրացիներն արեւելյան ողորմությամբ փորձում են տեղ սանալ աշխարհի ազդեցիկ քաղաքական գերհզոր այդ կառույցում: Սակայն հնարավո՞ր է միմիայն ողորմությամբ շահել պրագմատիկ եվրոպացիների եւ ամերիկացիների համակրանքը, ահա սա է հարցը, որի պատասխանը, կարծում եմ, պատասխանական Թբիլիսին դեռ չունի:

Ինչ է ՆԱՏՕ-ն

Ներկայումս աշխարհում գործող գերհզոր ռազմական դաշինքը՝ ՆԱՏՕ-ն ստեղծվել է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ԱՄՆ-ի նախաձեռնությամբ: Ցանկանալով կանգնեցնել ԽՍՀՄ-ի առաջխաղացումը եւ կոմունիստական գաղափարախոսության տարածումը, եվրոպական 12 երկրներ, ԱՄՆ-ը եւ Կանադան հիմնադրեցին Հյուսիս-ատլանտյան դաշինք կազմակերպությունը: Պատասխանը հիմնվեց Վաշինգտոնում 1949 թվականին: Ավելի ուշ Խորհրդային Միությունը ի հակակշիռ ՆԱՏՕ-ի ստեղծեց Վարշավայի պայմանագիր ռազմական դաշինքը: Փաստորեն, սառը պատերազմի տարիներին այս երկու ռազմական կառույցները, կարելի է ասել, որոշակի ռազմաքաղաքական հավասարակշռություն էին պահպանում ողջ աշխարհում: Եթե ՆԱՏՕ-ում ռազմական գերակշռությունը գտնվում էր ԱՄՆ-ի ձեռքին, ապա Վարշավայի պայմանագրի երկրներում հասկանալի կերպով գերակա դիրք էր գրավում ԽՍՀՄ-ը: Հյուսիս-ատլանտյան դաշինքում կազմակերպության գլխավոր քարտուղարի պաշտոնը միշտ վարում է եվրոպացի ներկայացուցիչը, իսկ միացյալ զորքերի հրամանատարի պաշտոնը՝ ԱՄՆ-ի ներկայացուցիչը: 1952-ին Հյուսիս-ատլանտյան դաշինքի անդամ դարձան Հունաստանը եւ Թուրքիան: Արեւմտյան Գերմանիան միավորվեց այդ կազմակերպությանը 1955-ին, իսկ Իսպանիան՝ 1982-ին: 1966-ին Ֆրանսիան, մնալով ՆԱՏՕ-ի անդամ, դուրս եկավ այդ կազմակերպության ռազմական բոլոր կառույցներից, հրաժարվելով ենթարկվել վերջինիս հրամանատարությանը: Այս իրադարձությունից հետո՝ 1967-ին ՆԱՏՕ-ի գլխավոր շտաբը Փարիզից տեղափոխվեց Բելգիայի մայրաքաղաք Բրյուսել: Խորհրդային Միության քայքայումից հետո դադարեց գործել նաեւ Վարշավայի պայմանագիր ռազմական կառույցը եւ ՆԱՏՕ-ն դարձավ աշխարհի միակ գերհզոր կազմակերպությունը: Ռուսաստանը պահանջում էր այդ կառույցի լուծարումը նույնպես, սակայն, ընդհակառակը, ՆԱՏՕ-ն սկսեց ընդլայնվել: Ընդլայնվող դաշինքը իր մեջ ընդունեց նոր երկրների, այդ թվում՝ մերձբալթյան հանրապետություններին, այսօր այդ կառույցին անդամակցում են 26 երկրներ:

Նախկին եւ ներկա ՆԱՏՕ-ն

ԽՍՀՄ-ի քայքայումը եւ ՆԱՏՕ-ի արագ ընդլայնումը նոր խնդիրներ առաջացրին այդ կառույցի համար: Տեսությանը փոխարինեց խոր հիասթափությունը, գլխավոր թշնամու՝ ԽՍՀՄ-ի բացակայության պայմաններում ի հայտ եկան այն խորհրդի հակասությունները, որոնք կային դաշինքի անդամ երկրների միջեւ: Արեւմտաեվրոպական երկրների համար պարզ դարձավ, որ ՆԱՏՕ-ն ԱՄՆ-ի ձեռքում դարձել է սեփական ռազմաքաղաքական ագրեսիան աշխարհով մեկ տարածելու գործիք: Իսկ Ֆրանսիան, Գերմանիան, Իտալիան եւ եվրոպական մի շարք այլ երկրներ չէին ցանկանում ծառայել ԱՄՆ-ի քաղաքական շահերին: Բացի դրանից էլ պարզ էր, որ ՆԱՏՕ-ի նորանդամ՝ արեւելաեվրոպական երկրներն իրականում կաշառում են Վաշինգտոնի քաղաքական պատվերը, դառնալով նրա կամակատարը: ՆԱՏՕ-ի անդամակցումը բավականին հիասթափեցնող էր նաեւ նորանդամ երկրների համար, վերջիններս հսկայական ծախսեր էին արել իրենց բանակները ՆԱՏՕ-ի սանդարտներին համարեցնելու համար, ակնկալում էին այդ ծախսերի հատուցում ու ընդհանրապես գտնում էին, որ ՆԱՏՕ-ն պետք է ֆինանսավորի իրենց պատերազմական ծախսերը Ռուսաստանի դեմ վարվող քաղաքականության պայմաններում: Սակայն Արեւմուտքն արդեն չէր գնահատում Ռուսաստանին որպես իր քաղաքական շահերի սպառնալիքի, հետեւաբար այլ բանակներին չէր ցանկանում ֆինանսավորել: Մերձբալթյան երկրների հույսերը, թե ՆԱՏՕ-ն ռազմահանգրվանները կտեղափոխի իրենց տարածք, նորից իրականություն չդարձան: Վերջինս միայն հաստատեցնց Մերձբալթիկա ուղարկել մի քանի ինքնաթիռներ, որոնք ժամանակ առ ժամանակ պարեկում են այդ հանրապետությունների օդային տարածքում: Սակայն հասկանալի է, որ նման պարեկման ռազմական նշանակությունը հավասար է զրոյի եւ ունի միայն բարոյական նշանակություն այդ հանրապետությունների համար: ՆԱՏՕ-ում առկա «ներքաղաքական» ճգնաժամն իր խորությամբ ի հայտ եկավ իրաքյան պատերազմի ժամանակ, երբ ՆԱՏՕ-ի հիմնադիր բոլոր անդամները, բացառությամբ Մեծ Բրիտանիայի, դեմ դուրս եկան այդ պատերազմին, ԱՄՆ-ին պատժամիջոցներ կառույցի նորանդամ երկրները, ինչն առաջացրեց արեւմտաեվրոպական երկրների խոր հիասթափությունը: Առկա ճգնաժամը պահպանվում է մինչ օրս եւ ԱՄՆ-ի որոշումը՝ իր հակահրթռային համակարգերը տեղադրել Չեխիայում եւ Լեհաստանում, նույնպես կաշառվեց առանց ՆԱՏՕ-ի խորհրդի գիտության:

ՆԱՏՕ-ն բարեգործական կազմակերպություն չէ

Այս հարցի պատասխանը ոչ միայն քաղաքական է, այսինքն՝ ոչ միայն կախված է ՆԱՏՕ-ի ներսի զարգացումներից եւ թե ինչպես կձեւավորվեն այդ կառույցի հարաբերությունները Վրաստանի կամ Ռուսաստանի հետ, այլեւ սա զուտ կանոնադրական խնդիր է: Ցնորանքի, որ Հյուսիս-ատլանտյան դաշինքն արեւմտյան կառույց է, այսինքն՝ գործում է ելնելով իր կանոնադրությունից, որը նա 59 տարիների ընթացքում չի խախտել ու չի էլ խախտի: Այդ կանոնադրությունը պահանջում է, որ ներքին թշնամի չլուծված եւ հարեւան երկրների հետ սահմանային խնդիրներ ունեցող երկրները չդառնան դաշինքի անդամ: Կամ Թբիլիսին պետք է հրաժարվի Աբխազիայի եւ Հարավային Օսիայի նկատմամբ իր հավակնություններից եւ փորձի այդպիսով դառնալ ՆԱՏՕ-ի անդամ, կամ շատ լուծի այդ հակամարտությունները: Հասկանալի է, որ զարգացման երկու սցենարն էլ միայն հավանական է, հետեւաբար խոսել մոտակա 10-տարում Հյուսիս-ատլանտյան դաշինքին Վրաստանի անդամակցության մասին՝ լուրջ չէ: Ի դեմ, ՆԱՏՕ-ն իր պատմության ընթացքում մի նախադեպ է կիրառել, որը զուտ տեսականորեն կրկնվելու հավանականություն ունի: 1952-ին այդ կառույցին են անդամակցել Թուրքիան եւ Հունաստանը, ունենալով սահմանային խնդիրներ միմյանց հետ: ՆԱՏՕ-ն իր վրա վերցրեց այս հարցի լուծման ողջ ծանրությունը: Այսինքն՝ Վրաստանի անդամակցումը հնարավոր է միայն այդ կառույցին Ռուսաստանի միանալու դեպքում: Նման սցենարը նույնպես հավանական չէ, հետեւաբար ժամանակն է հիշելու Հյուսիս-ատլանտյան դաշինքի նախկին գլխավոր քարտուղար Ջորջ Ռոբերտսոնի պատասխանը Վրաստանի նախկին նախագահ Էդուարդ Շեւարդնաձեի խնդրանքին՝ իր երկիրն ընդունել ՆԱՏՕ-ի կազմ, «ՆԱՏՕ-ն բարեգործական կազմակերպություն չէ»:

Ամփոփում

Ամեն գնով ՆԱՏՕ-ին անդամակցելու Վրաստանի ձգտումը որոշակի քաղաքական խնդիրներ է առաջացնում ոչ միայն այդ երկրի, այլեւ նրա հարեւանների համար: Գաղտնի չէ, որ ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունը մեր տարածաշրջանի բոլոր երկրների, այդ թվում նաեւ Հայաստանի համար ռազմավարական կարեւոր խնդիր է: Պարզ է նաեւ, որ ՆԱՏՕ-ի հետ ուղղակի կապերի հաստատումը բխում է Հայաստանի ազգային անվտանգության շահերից: 1994-ից Հայաստանը 30 այլ երկրների հետ մասնակցում է ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրին: 2003-ի հուլիսին ծրագրի շրջանակներում ռազմաուսումնական վարժանքներ տեղի ունեցան նաեւ Հայաստանում: Ներկայումս այս համագործակցությունը խորացման միտում ունի, ընդհանուր համագործակցության ծրագրերին փոխարինելու են եկել անհատական գործունեության ծրագրերը:

Սակայն տարածաշրջանի երկրների համար առկա հակամարտությունների պայմաններում ՆԱՏՕ-ի անդամակցության մասին խոսելը միայն ավելորդ լարվածություն է առաջացնում հարեւան, ՆԱՏՕ-ի ոչ անդամ երկրների՝ Ռուսաստանի եւ Իրանի հետ: Իսկ անդամակցության ձգտող երկիրը միայն սուզվում է իր հարաբերությունները հարեւանների հետ, նույնիսկ հեռանկարում չունենալով այդ կառույցին անդամ դառնալու հնարավորություն: Պարզ է մի բան, որ մոտ ապագայում մենք ականատես կլինենք պատերազմական Թբիլիսիի նոր հայտարարություններին ՆԱՏՕ-ի անդամակցության իր ձգտման մասին, ինչը հասկանալի կերպով կարժանանա Հյուսիս-ատլանտյան դաշինքի անդամ երկրներից շատերի հավանությանը: Վերջիններս կարունակեն խրախուսել Թբիլիսին, հասկանալով, որ նմանատիպ հայտարարությունները հիվանդագին են ընդունվում Մոսկվայում: Այնպես որ մոտակա տարիներին Վրաստանը հնարավորություն կտանա արժանանալու ՆԱՏՕ-ի լավագույն բարեկամ տիտղոսին, սակայն կառույցի դռները ամուր փակ կմնան նրա առաջ:

ԱՐՄԵՆ ՄԵՍՈՒԵՅԵՆ

ՀԱՅԱՏԱՊ ՊՐՈՒՊԵՏ

Կաշառակերությունը Հայաստանում չի վերահսկվում

«Տրանսպարենսի ինտերնեշնլ» (ՏԻ) միջազգային ոչ կառավարական միակ գործակալությունը, որը կարողանում է համախմբել հասարակական ընկերությունների, գործարար շրջանակների եւ կառավարական պատասխանների պայքարն ընդդեմ կաշառակերության, հիմնվել է 1993 թվին: Գլխավոր գրասենյակները գտնվում են Բեռլինում եւ Լոնդոնում: Իր «միջազգային քարոզչության» եւ ավելի քան 85 անկախ, ազգային մասնաճյուղերի անդամների անշահախնդիր աշխատանքի շնորհիվ այդ կազմակերպությունը փորձում է ազգային եւ միջազգային մակարդակներով սահմանափակել կաշառակերության ինչպես «առաջարկը», այնպես էլ «պահանջարկը», իրազեկում է կաշառակերության քայքայիչ հետեւանքների մասին եւ առաջարկում այն հաղթահարելու բարեփոխված միջոցներ:

Որքեսզի հասկանալի լինեն ՏԻ-ի օգտագործած միջոցները որեւէ երկրում կաշառակերության չափը որոշելու համար, անհրաժեշտ է ծանոթանալ նրա օգտագործած բառային մի քանի եզրերի հետ.

ա) Կաշառակերության ընկալման կամ զգացողության ցուցանիշը (ԿԸՑ) երկրներին դասում է ըստ նրանցում ընկալված կաշառակերության աստիճանի, այսինքն թե ինչքանով է կաշառակերությունը տարածված քաղաքացիական պատասխանների եւ քաղաքական այրերի շրջանում: Սա մի բաղադրյալ ցուցանիշ է, որի տվյալները ստացվում են բազմաբնույթ հետազոտությունների մասնագիտական հարցախույզերի միջոցով: Այդ ցուցանիշը հիմնականում արտացոլում է ուսումնասիրվող երկրի գործարար շրջանակների եւ այլ հասարակական կազմակերպությունների մասնագետ մեկնաբանների տեսակետները:

բ) Ինչո՞ւ է ԿԸՑ-ն բնորոշում կաշառակերությունը: Ընկալման ցուցանիշն ուշադրությունը բեւեռում է հասարակության սեկտորում տեղ գտած կաշառակերության երեւույթների վրա եւ բնութագրում է այդ տգեղ երեւույթը որպես պատասխանի չարաշահում հօգուտ անձնական շահի:

գ) Ինչո՞ւ է ցուցանիշը հիմնվում ընկալման վրա: Պարզապես որովհետեւ դժվար է կամ գրեթե անկարելի որեւէ երկրի կաշառակերության չափերը որոշելը այն պարզ պատճառով, որ ոչ կաշառ տվողը, ոչ էլ ստացողը չեն ցանկանում «երեւելի» դառնալ:

Կաշառակերությունն իր բնույթով անհնարին կարող է լինել, բայց ոչ անընկալելի: Կաշառակերությունից տուժողները սովորաբար հասարակ մարդիկ են, որոնք սակայն միշտ չէ, որ ի վիճակի են ճշգրիտ ներկայացնելու այն, ինչ կատարվում է: Այս պատճառով էլ ընկալման կամ ըմբռնման չափերը չափազանց կարեւոր են միշտ գնահատելու համար կաշառակերության տոկոսները: Դրանք կարեւոր են նաեւ երկում ներդրումներ կատարելու ցանկություն ունեցողների համար:

Այդ ցուցանիշը տատանվում է 10-ից (ամենամաքուր) զրոյի (չափազանց կոռումպացված) միջեւ, ընդ որում 5 եւ 5-ից ցածր գնահատական ստացածները համարվում են կաշառակերության լուրջ խնդիրներ ունեցող երկրներ:

Երկու տարի առաջ ՏԻ-ի արդյունքները մեկնաբանեցի «Նոր կեանք» թերթի 2005 թվի դեկտեմբերի 21-ի համարում լույս տեսած «Յո՞ երթաս, Հայաստան» հոդվածում, որը մի քանի օր անց արատավորվեց «Առմինյն օրգերվեր» թերթի դեկտեմբերի 28-ի համարում: Ըստ այդ տարվա ցուցանիշի, Հայաստանն ստացել էր 2,9 գնահատականը, որը մի փոքր ցածր էր նախորդ (2004) տարվանից (3-ից): Սա նշանակում է, որ 2005-ին կաշառակերությունը մի փոքր ավելացել էր Հայաստանում, թեեւ ընդհանուր առմամբ Հայաստանը մնացել էր նույն՝ 88-րդ տեղում, քանի որ փոխվել էր երկրների քանակը:

Ահա 10 ասիճանի սանդղակում Հայաստանի վերջին 5 տարիների ստացած գնահատականն ու գրաված տեղը:

Տարի	ԿԸՑ-ի գնահ.-ը	գրաված տեղը	երկրների քանակը
2003	3	77	133
2004	3,1	88	145
2005	2,9	88	158
2006	2,9	93	193
2007	3	99	179

Ինչպես հասկ երեւում է, Հայաստանը էական ոչ մի առաջընթաց չի արձանագրել այս բնագավառում: Ըստ վերջին՝ 2007-ի տվյալների, կաշառակերությունը Հայաստանից ավելի նվազ է 98 երկրներում:

ԴՈԿՏ. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳԱՌԱՅԱՆ
Լոս-Անջելես

Երկակի սանդարտները՝ դեմոկրատական իրողություն

Վրաստանի հանդեպ «ներողամիտ» Եվրոպան դժվար մեզ ների

Ժողովրդավարությունը բավականին յուտահատուկ դրսևորումներ կարող է ունենալ: Առավել ևս, դա ընկալումն այնքան տարբեր է, որ ավելի հաճախ բերում է երկակի սանդարտների կիրառման այն դեմոկրատ, երբ երեւույթները միանշանակորեն նույն գնահատականին են արժանի:

Հեռու գնալ պետք չէ ասվածն ապացուցելու համար, բավական է թեկուզ հիշատակել վացական իրականության վերջին օրերի իրադարձություններն ու այդօրինակ իրողություններին միջազգային կառույցների եւ եվրոպական պետությունների գնահատականները, երբ դրանք իրականություն էին դառնում մեր երկրում:

Խոսքի նաեւ մամուլի ազատության մասին այնքան հաճախ ու այնքան բարձր ասյաններից են խոսում, որ հազվադեպ չէ, երբ մոռանում են նյութի բովանդակությունը: Երբ հարեւան Վրաստանում նոյեմբերի 7-ին ոչ միայն եթերից, այլեւ բավականին թանկարժեք եթեր ապահովող սարքավորումներից զրկվեց ընդդիմադիր կեցվածք ցուցաբերած «Իմեդի» հեռուսաբնկերությունը, միայն մի քանի եվրոպաբնակներ բարձրաձայնեցին բազմակարծություն ապահովելու անհրաժեշտության մասին: Եվ դա այն դեպքում, երբ «Իմեդիից» բացի, որեւէ այլ խոշոր հեռուսաբնկերության եթերում ընդդիմադիր որեւէ գործչի եւ ոչ մի բառ չէր հնչում:

«Իմեդիի» փակմանը զուգահեռ թբիլիսյան փողոցներում ցուցարարների դեմ բեռինի մահակների ու փամփուշտների օգտագործումը միայն որակվեց անհարիր ժողովրդավարությանը, եւ այլ կարգի ոչ մի գնահատական չհնչեց, ոչ մի բան չհեռեւեց դրան:

Ինչ վերաբերում է նոյեմբերյան իրադարձություններից հետո հունվարի 5-ին արահերթ նախագահական ընտրություններին՝ դրանք իսկ նշանակող Միխեիլ Սաակաշվիլու հաղթանակով պայմանավորված էվեակությանը, ապա դրա առնչությամբ գնահատականներն իսկ ԱՊՀ եւ ԵԱՀԿ դիտորդական առաքելությունների դեպքում «ժողովրդավարական սանդարտներին համապատասխան» լինելու պարագայում անգամ փաստ է, որ նախընտրական փուլն ուղղակի ժողովրդավարական չէր:

Ընդդիմությունը քարոզարշավն անցկացրեց, ըստ էության, առանց եթերի, իսկ Սաակաշվիլու PR-ով զբաղվող «Ռուսթավի-2» եւ «Մզե» հեռուսաբնկերությունների եթերում հայտնվում էր այն, ինչ հարմար էր իշխանության թեկնածուին: Ավելին, մինչեւ քարոզարշավի պաշտոնական մեկնարկը, օրինակ, Սաակաշվիլին արդեն ինքն իրեն 5-րդ համարով էր ներկայացնում, իսկ ընդդիմությունը, այդպես էլ անկարող միավորվելու, ի դեմս մի քանի թեկնածուների էր քարոզում՝ առանց հաշվի առնելու սահմանված ժամկետները:

Այս ամենը տանելի ընդունվեց եւ ընդունելի անցկացվեց: Եվրոմիության, ամերիկյան կառույցների ներկայացուցիչներն էլի հույսեր ու հավաս հայտնեցին, թե Վրաստանում ամենաբարձր արժեքը մնում է ժողովրդավարությունը, ընտրությունները էլ անցան այդ արժեքի սանդարտներին համապատասխան, իսկ ընդդիմությունն էլ պետք է հարգի դրանք:

Ինչ է սա նշանակում: Արդյոք վրաց իշխանություններն ավելի ճիշտ քաղաքականություն են վարում եվրոպական հարեւանների հետ, թե՞ հակառուսական տրամադրությունները ամեն դեպքում ապահովում են ամերիկյան աջակցությունը Սաակաշվիլուն:

Կամ գուցե ավելի կազմակերպված է կառուցանում հանդես գալ ոչ այնքան կազմակերպված վրաց ընդդիմությունը, թե՞ հասկ առաջնորդ չունեցող վրաց միասնական ընդդիմությունն ավելի կարեւոր գործոն է՝ արտաքուս ճիշտ այնքան հակառուսական ուղղվածության, որքան իշխանական հակառուսական կողմնորոշումն է: Թեեւ եթե հավատալու լինենք ռուս մեծ հարեւանի բարիդրացիություն հաստատելու ցանկությունն բազմիցս հայտնած, բայց դեռեւս չիրագործած Սաակաշվիլուն, ապա Վրաստանը կարող է ավելի կոմպլեմենտար դառնալ, քան Հայաստանը:

Ամեն դեպքում, նույն կոմպլեմենտար Հայաստանին չէին ներ, ավելին, մեղմ ասած, պիտակավորում չէին տա, եթե ընտրություններն անցնեին այնպես, ինչպես մեր հարեւան երկրում: Եվ եթե վրաց ընդդիմադիրները հաղթություն անելու մասին են խոսում, որքանով եթեր ստանան Վրաստանի հանրային հեռուսատեսությամբ, ապա մեր ընդդիմությունը հաստատապես նման խնդիրի չի գնա, ու երեւի դրա կարիքն էլ չունի: Չունի կարիք թեկուզ այն հիմքով, որ թերթ ունի, իհարկե, եթե մեր ընդդիմությունն էլ կարողանա գոնե այն չափով միավորվել, ինչ չափով իրար կողքի հայտնվեցին վրաց տասը ընդդիմադիր կուսակցությունները:

Վրաց ընդդիմությունը, որ ներկա պահին երկրորդ փուլ անցկացնելու պահանջ է ներկայացնում եւ պատրաստվում հունվարի 13-ին անցկացնել թույլատրված հանրահավաք, ամեն դեպքում, ապացուցեց խորհրդարանական ընտրություններում նշանակալի տոկոս հավաքելու իր ընդունակությունը: Եվ դա արդեն իսկ հուշում են նույն միջազգային կառույցներն ու փորձագետները: Իսկ մեր ընդդիմադիր դաշտում գերակշռում են խոհերն ու մտքերը, չկան կոնկրետ քայլեր:

Բայց թերեւս ավելի կարեւոր են դրսից մեզանում տեղի ունեցող գործընթացներին տվող որակումները, քան դրանց բովանդակությունն ու հնարավոր ազդեցությունը հենց մեզ վրա: Եթե այս կերպ նայենք, ապա, ինչպես նշեց Վարդան Օսկանյանը օրերս տեղի ունեցած ասուլիսում, ավելի լավ է մենք նորմալ ընտրություններ անցկացնենք: Թե չէ մեզ չեն ների այն, ինչ Վրաստանում անգամ չնկատեցին:

ԱՐԱՐԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ինդոնեզիան փնտրում է Սուհարտոյի միլիարդները

Նա աշխարհի թիվ 1 կաշառատու բռնապետն է

Ինդոնեզիայի նախկին բռնապետ, 86-ամյա Սուհարտոյի առողջական վիճակը ծանր է: «Ֆիգարո» թերթի տվյալներով, ուրբաթ օրվանից նա հիվանդանոցում է: Բայց Ինդոնեզիայի իշխանություններին ավելի շատ հետաքրքրում է Սուհարտոյի միլիարդների հարցը:

Նախկին բռնապետների գողացած միլիարդների վերադարձմանն օժանդակելու նպատակով անցյալ սեպտեմբերին միջազգային արավ ծավալած Համաշխարհային բանկի եւ ՄԱԿ-ի տվյալների համաձայն, Սուհարտոն աշխարհում առաջին տեղն է զբաղեցնում կաշառատու նախկին բռնապետների ցանկում: «Թրանսպարենսի ինտերնեշնլ» ոչ կառավարական կազմակերպությունում կարծում են, որ կառավարման 32 տարիներին Սուհարտոյի ընտանիքը յուրացրել է 15-35 մլրդ դոլար:

Ի տարբերություն Ֆիլիպինների, Նիգերիայի եւ մի շարք այլ երկրների, Ինդոնեզիան իր նախկին բռնապետի վարչակարգի տարալուծից մեկ տասնամյակ հետո էլ չի կարողանում նույնիսկ մասամբ հետ ստանալ գողացված փողերը:

Կաշառատուության թեման շահարկելով՝ քաղաքական ընդդիմությունը 1998-ին տարալեց Սուհարտոյի վարչակարգը: Բայց արդարադատությունը մինչեւ օրս չի կարողացել որեւէ արդյունքի հասնել յուրացված գումարների վերադարձման հարցում: Անցյալ տարի դատարանը հրաժարվեց Սուհարտոյի դեմ քրեական հետաքննման փորձերից, նկատի առնելով նրա առողջական վիճակի վատթարացումը:

Փաստաբան Տոդունգ Լուբիսը այս կապակցությամբ նշում է, որ եթե Նիգերիայում եւ Ֆիլիպիններում բռնապետների տարալուծից հետո բացահայտվել են գողացված փողերի «երթուղիները», ապա Ինդոնեզիայում համակարգը փոխվել է, բայց մարդիկ մնացել են:

Իր իշխանության տարիներին Սուհարտոն հասցրել է մերձավորներին պետական բարձր պաշտոններ տալ եւ շատերը դեռ շարունակում են պաշտոնավարել: Մի խոսքով, «քաղաքական ընտրախավն ուզում է Սուհարտոյին պաշտպանել իրեն պաշտպանելու համար»:

Ինդոնեզիայի գլխավոր դատախազը, սակայն, հավաստիացնում է, թե Սուհարտոյի դատական հետաքննումները կշարունակվեն նույնիսկ նրա մահից հետո: Բայց Ինդոնեզիայում դատական գործընթացը շատ երկար է տեւում: «Ֆիգարո» ենթադրում է, որ դատավարությունը կարող է ավարտվել երկու տարուց ոչ շուտ: Բացի դրանից, համանման դատավարությունների փորձը լավատեսության տեղ գրեթե չի թողնում:

Ի դեմ, անցյալ տարի Սուհարտոն շահեց «Թայմ» հանդեսի դեմ հարուցած դատը, ամերիկյան հանդեսին մեղադրելով զրպարտության մեջ: 1999-ին «Թայմի» հրատարակած խնդրի արդյունքների համաձայն, Սուհարտոն յուրացրել է 15-35 մլրդ դոլար: Ինդոնեզիայի գերագույն դատարանը անցյալ տարի չեղյալ հայտարարեց նախկին մեղադրական երկու վճիռները, արդարացրեց Սուհարտոյին եւ «Թայմին» պարտավորեցրեց որպես բարոյական փոխհատուցում 108 մլն դոլար վճարել նրան:

Դմիտրի Ռոգոզինը նշանակվեց ՆԱՏՕ-ում ՌԴ մշտական ներկայացուցիչ

Նախագահ Վլադիմիր Պուտինի հրամանագրով Պետդումայի նախկին պատգամավոր Դմիտրի Ռոգոզինը նշանակվել է ՆԱՏՕ-ում ՌԴ մշտական ներկայացուցիչ: Փոխարինելով Կոնստանտին Տոցկուն: ՌԻԱ գործակալությունը հաղորդում է, որ նախօրեին Ռոգոզինի թեկնածությանը հավանություն էին տվել Դաշնության խորհուրդը եւ Պետդուման, ինչպես նաեւ ՆԱՏՕ-ն:

Ռոգոզինի հնարավոր նշանակման մասին դեռ հոկտեմբերի վերջերին հաղորդել էր Ռոյթեր գործակալությունը: Չորրորդ գումարման Պետդումայի պատգամավոր Դմիտրի Ռոգոզինը «Հայրենիք: Ռուսական հանձնաժողովների կոնգրես» կազմակերպության նախագահն է: Նա «Մեծ Ռուսաստան» չգրանցված կուսակցության հիմնադիրներից մեկն է: 2006-ի հոկտեմբերին նա ազգայնական ուժերի համատեղ ծեռնարկման՝ «Ռուսական երթը» նախաձեռնող հասարակական խորհրդի կազմում էր:

2002-04 թթ. Ռոգոզինը Եվրոմիության ընդլայնման կապակցությամբ Կալինինգրադի մարզի կենսագործունեության ապահովման հարցերի գծով ՌԴ նախագահի հատուկ ներկայացուցիչն էր եւ իր աշխատանքի համար նախագահ Պուտինից հատուկ շնորհակալագիր ստացավ:

2007-ին Ռոգոզինը Պետդումայի անվտանգության կոմիտեի փոխնախագահն էր: Նա հայտնի է հակառուսական կոչ դիտորոշմամբ, հատկապես ՆԱՏՕ-ի նոր անդամներ Էստոնիայի եւ Լատվիայի հարցում:

Բլերը կաշխատի ամերիկյան բանկում

Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ Թոնի Բլերը նշանակվել է ամերիկյան երրորդ խոշորագույն բանկի՝ «Սորգան Չեյզի» ավագ խորհրդական եւ միջազգային գործերի խորհրդի անդամ: Այդ մասին հաղորդվում է բանկի պաշտոնական մամլո տեղեկագրում: Բլերը միջազգային քաղաքականության հարցերի գծով խորհուրդներ կտա անմիջականորեն գործադիր տնօրեն Չեմի Դայմոնին եւ մյուս գլխավոր կառավարիչներին: Բացի դրանից, նա բանկի անունից հանդես կգա զանազան միջոցառումների ժամանակ:

Բլումբերգ գործակալությունը նշում է, որ իր ծառայությունների դիմաց Թոնի Բլերը տարեկան կստանա մոտավորապես 1 մլն դոլար: Ներկայումս 54-ամյա Բլերը աշխատում է որպես «Մերձավորարեւելյան քառյակի» (ՄԱԿ, ԱՄՆ, ԵՄ, ՌԴ) հատուկ ներկայացուցիչ: Նա այդ աշխատանքը կհամատեղի բանկային գործունեության հետ: Վարչապետի պաշտոնը Բլերը թողեց 2007-ի հունիսի 27-ին:

Աֆղանստան կուղարկվեն ամերիկյան հավելյալ ուժեր

ԱՄՆ պաշտպանության նախարար Ռոբերտ Գեյթսը ֆնությունի է առնում Աֆղանստանում ամերիկյան զորաբաժինը 3000 զինծառայողներով համալրելու հարցը: Ռոյթեր գործակալության տվյալներով, Աֆղանստան հավելյալ ուժեր ուղարկելու առաջարկությամբ հանդես է եկել ԱՄՆ զինվորական հրամանատարությունը: Ենթադրվում է զորաբաժինը համալրել ամերիկյան ծովային հետեւակի զինծառայողներով:

Զինվորականների խոսքերով, հավելյալ ուժերն անհրաժեշտ են «Թալիբան» շարժման գրոհայինների դեմ հատուկ գործողություններ իրականացնելու համար: Հետախուզական տվյալների համաձայն, 2008-ի աորիլին թալիբները Աֆղանստանի հարավում լայնածավալ գործողություն են ծեռնարկելու ՆԱՏՕ-ի զորքերի դեմ:

Պենտագոնի մամլո քարտուղար Ցեֆ Մորելի խոսքերով, հավելյալ զորքեր ուղարկելու որոշումն այս շաբաթ դժվար թե ընդունվի: Ներկայումս Աֆղանստանում ամերիկացիներն ունեն մոտ 27 հազար զինծառայող: Նրանց կեսը մտնում է ՆԱՏՕ-ի 40 հազարանոց զորքերի կազմի մեջ:

ՍՐԵՎՈՏՅԱՆ ՄԱՄՈՒԼ

2003-ից մինչեւ օրս զոհվել են 151 հազար իրաքցիներ

2003-ի գարնանը Իրաքի դեմ ծավալված պատերազմի ընթացքում մոտ 151 հազար մարդ է զոհվել: Այդ են վկայում երկրում անցկացված վերջին եւ առավել զանգվածային հարցումներից մեկի տվյալները: Այս թիվը գրեթե հառակի փորք է 2006-ին բժշկական հեղինակավոր «Լանսետ» հանդեսի բերած տվյալներից, բայց եռակի մեծ է «Իրաք բոդի քաունթ» կազմակերպության տվյալներից:

BBC-ն նշում է, որ վերջին հետազոտության ընթացքում ամբողջ Իրաքի քաղաքներում ու գյուղերում հարցման են ենթարկվել ավելի քան 9000 ընտանիքներ: Իրաքի առողջապահության նախարարությունը հետազոտությունն անցկացրել է Առողջապահության համաշխարհային կազմակերպության պատվերով: Հետազոտությունն ընդգրկում է 2003-ի մարտից 2006-ի հունիս ընկած ժամանակահատվածը: Ընդամենը բոլոր զոհերի կեսն ընկնում է Բաղդադին:

Հարցումը վկայում է, որ բռնարարքները չափահաս իրաքցիների մահացության գլխավոր պատճառներից են եղել, իսկ 15-59 տարեկան տղամարդկանց շրջանում՝ գլխավոր պատճառը:

Հարցման հեղինակները իրենց հետազոտությունը հավատի են համարում, ընդգծելով բնակչության զանգվածային մասնակցությունը, ինչպես նաեւ այն փաստը, որ նոր տվյալներն ընդհանուր առմամբ համընկնում են առաջ իրենց ունեցած տվյալներին:

Այդուհանդերձ հեղինակներն ասում են, որ 151 հազար զոհը ստույգ չէ. նրանց խոսքերով, զոհերի թիվը կարող է տատանվել 104-ից մինչեւ 223 հազարի սահմաններում: Առողջապահության համաշխարհային կազմակերպության վիճակագիրներից մեկը՝ հետազոտության համահեղինակ Մոհամմեդ Ալին նշում է, որ Իրաքում մահն արձանագրող անթերի համակարգի եւ հիվանդանոցներից ստացվող հաղորդումների բացակայության պայմաններում ընտանիքների զանգվածային հարցումը առավելագույնն է, որ հնարավոր է անկնալել: Հարցումների խոչընդոտներ են կենտրոնացված արխիվների բացակայությունը, Իրաքի որոշ երջանների վտանգավորությունը, ինչպես նաեւ բնակիչների մի մասի արտագաղթը:

ԱԶԳ

Մարիամ Ասլամազյան

Դիմանկարի փորձ՝ նկարչուհու մտորումներով

Երջանիկ արվեստագետ էր Նկարչուհի Մարիամ Ասլամազյանը. նա ստեղծեց լիարժեք ստեղծագործական կյանքով, ցուցադրեց ափարհի լավագույն ցուցասրահներում եւ թանգարաններում, արժանացավ բազմաթիվ պարգեւների ու կոչումների: Նրա արվեստի մասին գրվեցին հոդվածներ, տպագրվեցին բուկլետներ, կատալոգներ, ալբոմներ, գործերի զգալի մասը տեղ գտավ ափարհի 50 թանգարանների մշտական ցուցադրությունում: Կյանքի վերջին տարիներին, երբ՝ Նկարչուհի Երանուհի Ասլամազյանի հետ մոտ 660 ափսեաներ նվիրեց հարազատ Գյումրի քաղաքին՝ ստեղծելով Ասլամազյան ժողովրդի թանգարանը:

Մարիամ Ասլամազյանի ամբողջ գիտակցական կյանքը անմնացորդ նվիրում էր արվեստին: Նկարչուհին ապրեց մոտ մեկ դար վրձինը ձեռին, իսկ կյանքի վերջին տարիներին ի մի բերելով առածն ու լարածը գրեց իր «Կյանքի դավթարը»՝ պատմելով կյանքի բարդ, դժվարին տարիների ու երջանիկ դիպվածների, հանդիպումների պատմությունը:

Մարիամ Ասլամազյանը ծնվել է 1907 թվականի հոկտեմբերի 20-ին, Գյումրուց ոչ հեռու գտնվող Բաբ-Հիրակ գյուղում (այժմ Թուրֆիայի տարածք), ջրաղացպանի ընտանիքում:

Դպրոցական տարիներին Մարիամը երբ՝ երանուհու հետ լույս էր ընծայում պատի թերթ, կատարում ձեռավորման ափսեաներներ: Նկարչության դասատու՝ Բուլայանը նկատում է աղջիկների շնորհը եւ առաջարկում նրանց կրթությունը շարունակել Գյումրու նորաբաց գեղարվեստական դպրոցում: Ավարտելուց հետո, 1926 թվականին, Մարիամն ընդունվում է Երեւանի գեղարվեստի ուսումնարան, աշակերտում Ս. Սոսթենյանին, Ս. Աղաջանյանին, Ա. Սարգսյանին, Մ. Արուչյանին: Այնուհետեւ սովորում է Մոսկվայի ՎԽՈՒՏԵՄԱՍ-ում (բարձրագույն գեղարվեստաարդյունաբերական ինստիտուտ) եւ Լենինգրադի գեղարվեստի ակադեմիայում՝ ուսանելով ժամանակի կերպարվեստի ամենահայտնի վարպետներին՝ Ս. Գերասիմով, Կ. Խատոնին, Վ. Մուխինա, Կ. Պետրով-Վոդկին, Ա. Սամբորով, Ն. Ուդալցովա, Ս. Ռեմիզով: Հետագայում ավարտում է ասպիրանտուրան:

Ազգային գեղանկարչության ավանդույթներով նա ստեղծում էր իր յուրօրինակ արվեստը՝ դիմանկարներ, բնանկարներ, նատյուրմորտներ, կոմպոզիցիոն կտավներ, կատարում թատերական ձեւավորումներ, զբաղվում խեցեգործությամբ:

Մարիամ Ասլամազյանի ստեղծագործական կյանքի ողջ ճանապարհը հայրենի արվեստին անհատույց նվիրաբերած հրաշալի օրինակ է: Նա ոչնչով, փնտրող արվեստագետ է: Նրա բնատուր տաղանդին առանձնահատուկ հմայք էր տալիս մարդկային բարությունը, ընկերասիրությունը:

Նկարչուհու արվեստը գունային առումով հնչեղ է, կոմպոզիցիան՝ պարզ, իրերն ու երեւույթները արտահայտված խոր դիտողականությամբ:

Մարիամը դիմանկարի փայլուն վարպետ է: Նկարչուհու արվեստի հիմքում ընկած է մարդու նկատմամբ խորը հետաքրքրությունը: Յուրաքանչյուր անհատ Ասլամազյանի համար անկրկնելի բարոյական արժեք էր: Նա պատկերել է ամենաատարբեր ազգությունների, մասնագիտությունների, բնավորությունների մարդկանց: Նկարչուհուն հետաքրքրում են մարդու էությունը, նրա ազգային պատկանելությունը, խառնվածքը, կյանքի փորձը, միջավայրը, անցած ճանապարհը, տարազը: Մ. Ասլամազյանը կարողանում է իր միտքը դիտողին հասցնել թե՛ վառ, հյութեղ գույների օգտագործմամբ, թե՛ գեղանկարչական սուղ միջոցներով: «Դիմանկարի վրա ափսեներին ինձ միշտ հետաքրքրում է մարդու ներին ափսարհը, նրա մտքերն ու հույզերը: Բնավորությունը ինձ բերում է այս կամ այն գեղանկարչական լուծման», գրում է Մ. Ասլամազյանը:

1939-44 թվականներին Նկարչուհին ստեղծում է ծեր կանանց բազմաթիվ դիմանկարներ («Տատիկը», «Հիվանդ բաջին», «Լուտեր ռազմաճակատից», «Եղեռնի զոհը», «Ջարդարի դիմանկարը» եւ այլն), որոնցում պատկերում է կյանքի երկար ու ձիգ ճանապարհ անցած, տարիների փորձով իմաստնացած անհատներին: «Ես առանձնապես սիրում եմ նկարել ծեր մարդկանց: Շատերին է զարմացնում իմ այդ հակումը, բայց ես այդ հանգիստ դեմքերի, այդ հոգնած ձեռքերի հետեւում տեսնում եմ տարբեր բնավորություններ, տարբեր ճակատագրեր: Ես տեսնում եմ ափսեանի մեջ ապրած կյանք եւ մարդկային մեծ իմաստություն, որը հաղթահարում է թե՛ ցավությունները, թե՛ հիասթափությունները»:

Տաք գույների իսկական համանվագ է «Մոր դիմանկարը» (1965):

Երկնագույն ծանկոցով թախտի վրա, մտորումների մեջ նստած է մայրը՝ Վարդուհին: Նա ուր երեխա է մեծացրել, դաստիարակել: Պատին կախված է դստեր՝ Մարիամի ափսեանիներից մեկը, կողքին՝ նամակներ, որոնք նա ստացել է թեւեր առած ու հեռուները թռած իր զավակներից: Նկարչուհին վարպետորեն է համադրել մոր կարոտը զգեստը, կողքի բարձի դեղին ու կարմիր գույները՝ ուշադրության կենտրոնում պահելով պատկերվողի խորհրդավոր դեմքն ու ծանր ափսեանից կոտրացած ձեռքերը:

Նկարչուհին կտավներում հաճախ է պատկերել մարդկանց՝ հայրենի քաղաքի ֆոնի վրա («Հեռացող Լենինականը», «Քույրերը Լենինականից» եւ այլն): Եթե առաջինում Նկարչուհին ներկայացնում է իր տարեց բնակիչներով անվերադարձ հեռացող հին Լենինականը՝ փոքրիկ տնակներով, ծուռումուռ նեղ փողոցներով, երկրորդում ստեղծում է սիրած քաղաքի գալիք սերնդի կերպարը:

Հայրենական Մեծ պատերազմի տարիներին Նկարչուհին ստեղծում է «Հերոսի վերադարձը» կտավը, որն աղբեցնում է իր լավատեսությամբ եւ ապագայի նկատմամբ մեծ հավատով:

Մարիամ Ասլամազյանի արվեստում մեծ տեղ են գրավում բնանկարները: Թեեւ կրթություն ստանալուց հետո Նկարչուհին հաստատվել է Մոսկվայում, սակայն երբեք չի խզել կապը հայրենիքի հետ: Ամեն տարի վաղ գարնանից մինչեւ ուշ աշուն Մարիամը ապրել է Հայաստանում, մասնակցել կազմակերպվող ցուցահանդեսներին, շրջիկ արվեստանոցների ափսեանիներին, շրջել Հայաստանի գյուղերում ու քաղաքներում, ապրել հասարակ գյուղացիների տանը, նկարել անկրկնելի բնությունն ու մարդկանց: Հայաստանը Ներսեսյանի անսպառ աղբյուր է եղել Նկարչուհու համար: Որքան սեր, կարոտ, անմնացորդ նվիրում եւ հիացմունք կա նրա բնանկարներում: «Ամենից լավ նկարում եմ Հայաստանը... Սիրում եմ մեր լեռները, պլաջիկ բարդիները, գեղակների խոխոջյունը եւ գեղեցիկ մարդկանց: Այդ թեմաներն են ինձ թելադրում նկարներիս գույները: Ուստի նկարում եմ գունագեղ ու վառ»: Ահա թե ինչ է գրում Նկարչուհին:

Մ. Ասլամազյանը նկարում է այն ամենը, ինչը մոտ ու հարազատ է իրեն: Իր կտավներում նա պատկերում է Հայաստանի յուրօրինակ գեղեցկությունը՝ հնաոճ իրերը, զարդերը, հայկական գորգերն ու կարպետները: «Մի քանի տարի առաջ լարված, դժվար ափսեանիից հետո որոշեցի հանգստանալ: Մեկնեցի Հայաստանի լեռնային շրջաններից մեկը՝ Հանիավան: Ուզում էի որոշ ժամանակ լրիվ անջատվել ափսեանիից, նույնիսկ ներկանյութ ու վրձինը ձեռքս չվերցնել: Բայց դեռի լեռները հենց առաջին արեւվին ես տեսա անսովոր գեղեցիկ հրաշք: Տաք, ալ բոցով հուտիում էր հսկայական կարմիր կակաչների մի ամբողջ ծով: Դա այնքան գեղեցիկ էր: Տպավորությունն այնքան զորեղ էր, որ հենց տեղնուտեղը արեւայական այդ ծաղիկներից մի մեծ փունջ արեցի ու սլացա տուն, որ առանց կորցնելու հիացմունքի նախնական զգացումս, սկսեմ նկարել», գրում է Նկարչուհին:

Կոմպոզիցիայի կառուցումը, կատարման տեխնիկան, երանգների համադրումները, ժպտացող, պայծառ գույները ստեղծում են լուսավոր տրամադրություն: Մարիամի կտավներից գույներն ասես ժպտում են, կանչում՝ դիտողի վրա թողնելով անմոռաց տպավորություն: Դա նկարչուհու ներքին էությունն է, արտահայտվելու յուրօրինակ կերպը: Բոլոր գործերում երեւում է նրա վերաբերմունքը պատկերվածի նկատմամբ: Նրա կտավներից ծաղիկները բուրում են անուշահոտությամբ, մրգերը հաղորդում են ու ախորժաբեր, սեղանները՝ առատ, ճոխ, տոնական: Նա ստեղծում է նաեւ թեմատիկ նատյուրմորտներ՝ «Ռուսական», «Արեւելյան», «Հնդկական», «Աֆրիկական», «Սիրիական» եւ այլն, որոնք նրա բազմաթիվ ճանապարհորդությունների արդյունքն են:

Նկարչուհին կատարել է նաեւ թատերական ձեւավորումներ: 1959-60 թվականներին Մոսկվայում ձեւավորել է Ալ. Արախանյանի «Քո տրի կոկը» պիեսը եւ հայկական կրկեսի ներկայացումները:

Նկարչուհին եղել է ափսարհի ամենատարբեր երկրներում, նրան հատկապես հրապուրել է Արեւելքը: Ամեն մի ուղեւորությունից վերադարձել է մեծ տպավորություններով, որոնք հետագայում դարձել են նկարաշարեր, դիտողին զարմացնելով իրենց կատարման բացառիկ վարպետությամբ, գունային հրաշալի համադրություններով: Այդ ափսեանիների համար Նկարչուհին 1972 թվականին արժանացել է Ջ. Նեռուի անվան, իսկ 1976 թվականին՝ Գ. Նասերի անվան մրցանակների:

Մարիամ Ասլամազյանի տեսնող աչքերը միշտ էլ բարձր է գնահատվել. 1965-ին արժանացել է ՀՍՍՀ, իսկ 1990-ին ԽՍՀՄ ժողովրդական նկարչի կոչման:

Վառ երեւակայություն, գունային նուրբ զգացողություն, կոմպոզիցիայի կառուցման հմտություն, անսպառ եռանդ ու ափսեասիրություն, ահա այն հատկանիշները, որոնք Մարիամ Ասլամազյանի արվեստը դարձնում են մնայուն:

ՍՏԵՓԱՆԻԱ ՓԻԼՈՍՅԱՆ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ «ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆԻՍ»

«Մետրոպոլիտեն» թանգարանի տնօրենը հրաժարական է տալիս

«Նյու Յորք թայմս» թերթի հունվարի 9-ի հաղորդագրության, արվեստի ափսարհի խոշորագույն հասատության համաձայն՝ Մետրոպոլիտեն թանգարանի տնօրեն Ֆիլիպ դը Մոնտեբելլոն որոշում է թոշակի անցնել այս տարվա վերջին:

Թանգարանի 138-ամյա պատմության մեջ արիստոկրատ Մոնտեբելլոն 8-րդ տնօրենն է եղել, որն ամենաերկարն է զբաղեցրել այդ պատասխանը (30 տարի): Նա 71 տարեկան է եւ նրա մեղրաթիր ձայնը թանգարանի ներսում տարբեր լեզուներով հնչած ռադիոուղեցույցների ժամանակ ծանոթ է ափսարհի զանազան ծայրերից ժամանած միլիոնավոր այցելուների: Իր պատասխանավարման ընթացքում, շնորհիվ իր կազմակերպչական հմուտ կարողությունների, նա ավելի քան կրկնապատկել է թանգարանի ցուցադրական տարածքները, բացելով նոր դահլիճներ՝ նոր ցուցանմուշներով, ինչպես հունական, հռոմեական եւ եվրոպական կտավների երկարաժամկետ ծրագրերով ձեւավորված տարածքներ:

«Դժվար որոշում էր ինձ համար, բայց կարծում եմ՝ ժամանակն է: Ես իմ ամբողջ կյանքն եմ նվիրել այս հասատությանը, բայց 30 տարուց ավելի մնալը նույն պատասխանում պատասխանության նորմերի խախտում կլինի», ասել է նա:

Ի հակադրություն իր նախորդի՝ Թոմաս Հովինգի, որն ըստ «Նյու Յորք թայմսի» թղթակից Քերոլ Վոգելի եղել էր «շոումեն» եւ «ինմնակալ», Մոնտեբելլոն «արիստոկրատ» տնօրեն է եղել, որը սեր համագործակցել է իր ափսաակիցների հետ: Նա «Մետ»-ում ընդունվել 1963-ին որպես կուրատորի օգնական եվրոպական կտավների ցուցասրահներում եւ 1977-ին դարձել տնօրեն: Ֆրանսիացի ծնողների զավակը սովորել է Հարվարդում եւ իր եվրոպական ոճի կարգապահության եւ կազմակերպվածության շնորհիվ կարողացել հասատությանը կատարված եկամտությունները 1,36 մլն դոլարից բարձրացնել մինչեւ 2,9 մլրդ դոլար: Այցելուների քանակը 3,5 միլիոնից հասել է 5,1 մլն. 2000-ին: Անցյալ տարի 4,6 մլն մարդ է այցելել թանգարան:

Իր տնօրենության ընթացքում կազմակերպված եզակի ցուցահանդեսների թվում կարելի է հիշատակել «Վաղիկանի հավաքածուները»՝ 1983-ին, «Վելասկեզյան դիտումները»՝ 1989-90-ին, «Բյուզանդիայի փառը»՝ 1997-ին, «Եգիպտական արվեստը բուրգերի դարաշրջանում»՝ 1999-2000-ին եւ «Լեոնարդո դա Վինչին»՝ 2003-ին:

Իր ղեկավարման հրաժարականի առթիվ թանգարանի վարչությունն արդեն իսկ որոնողական մի հանձնախումբ է կազմավորել, որի նախագահն ու փոխնախագահն են նշանակվել համապատասխանաբար Անն դը լա Ռենտան եւ Պարկեր Ֆիլբրեյը, երկուսն էլ «Մետ»-ի վարչության փոխնախագահներ:

Այդ վարչության նախագահ Ջեյմս Հուքոնի կարծիքով, «դժվար է լինելու» փոխանորդ գտնելը: «Հնարավոր թեկնածուների քանակը այնքան էլ մեծ չէ», ասել է նա:

Պատրաստեց Հ. ՕՍԻՊՈՎԻՉԸ

Հիշարժան տարեթվեր

«Ազգը», Հայաստանի ազգային գրադարանի աջակցությամբ, այսուհետ իր ընթերցողներին կներկայացնի, թե 2008 թվականին ինչ հիշարժան օրեր, տարեդարձներ, տարելիցներ են լինելու:

Հունվար ամսին լրանում է

Վահան Թեքեյանի ծննդյան 130-ամյակը (բանաստեղծ, հրապարակախոս, հասարակական գործիչ)

Վահրամ Փափազյանի 120-ամյակը (դերասան, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ)

Վահրամ Թերզիբաշյանի 110-ամյակը (գրականագետ, թատերագետ)

Գարեգին Արամյանի 100-ամյակը (կինոռեժիսոր)

Մեսրոպ Ճանաչյանի 100-ամյակը (գրականագետ, բանաստեղծ, թարգմանիչ)

Արտաշիր Հակոբյանի 100-ամյակը (պատմաբան)

Կարոլ Խաչվանքյանի 85-ամյակը (ժողովրդական դերասան)

Հովհաննես Ջաղոյանի 90-ամյակը (նկարիչ)

Խաչատուր Իսկանդարյանի 85-ամյակը (ճանապարհագործ, նկարիչ)

Հովհաննես Հովհաննիսյանի 80-ամյակը (ճանապարհագործ)

Սեն Արեւշատյանի 80-ամյակը (հայագետ, փիլիսոփա)

Հովհաննես Մինասյանի 80-ամյակը (նկարիչ)

Լեւոն Միրիջանյանի 75-ամյակը (բանաստեղծ, գրականագետ)

Ռուբեն Սանոյանի 75-ամյակը (դրամատուրգ)

Ռուդոլֆ Ժամհարյանի 70-ամյակը (կինոռեժիսոր)

Ռաֆիկ Հովհաննիսյանի 60-ամյակը (լրագրող, հրապարակախոս, հեռուստաեթերաբան)

Արթուր Ռիզայանի 60-ամյակը (դերասան)

Հրանտ Թոխատյանի 50-ամյակը (դերասան)

Լրանում են նաեւ՝ Նորվեգացի լեզվաբան, հայագետ Սոֆուս Բուրգեի 175-ամյակը, Մոսկվայում լույս տեսած «Հյուսիսափայլ» ամսագրի առաջին համարի 150 տարին, Ս. Ղազար կղզում Մխիթարյան միաբանության հրատարակությամբ լույս տեսած «Բազմավէպ» ֆիլոսոֆական, բանասիրական, գրական հանդեսի 165 տարին, հունգարացի բանաստեղծ Շանդոր Պետեֆիի ծննդյան 185-ամյակը, ռուս նկարիչ Վասիլի Սուրիկովի 160-ամյակը, անգլիացի բանաստեղծ Ջորջ Բայրոնի 220-ամյակը, ֆրանսիացի բանաստեղծ եւ ինքնատես Շառլ Պերոյի 380-ամյակը եւ ֆրանսիացի գրող՝ Ստենդալ Անրի Բելլի 225-ամյակը: Հունվար ամսին նշվում է Բանակի օրը, Վարդանանց օրը, Ս. Սարգսի տոնը: Հունվարի 26-ին ծնվել է Պիեռոտ Սելակը, ով այժմ կլիներ 84 տարեկան:

ՄԱՐԻՆԵՍ ՄԱՐԿԱՐՅԱՆ

ՀՀ հավաքականը նոր մրցաշրջանը կսկսի Մալթայում

Ընտրական մրցաշարի խաղացանկը կորոշվի վիճակահանությամբ

Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականը նոր մրցաշրջանը կսկսի փետրվարի 2-6-ը Մալթայում չորս հավաքականների մասնակցությամբ կայանալիք մրցաշարով: Մեր ընտրանու մրցակիցները կլինեն Մալթայի, Բելառուսի եւ Իսլանդիայի հավաքականները: Առաջին հանդիպումը մեր ֆուտբոլիստները կանցկացնեն փետրվարի 2-ին Մալթայի ընտրանու հետ: Երկու օր անց մեր թիմի մրցակիցը կլինի Բելառուսի հավաքականը, իսկ փետրվարի 6-ին հայ ֆուտբոլիստները կմրցեն Իսլանդացիների հետ:

Առայժմ դժվար է ասել, թե ով կգլխավորի ՀՀ հավաքականը Մալթայի մրցաշարում: Ֆուտբոլի Հայաստանի Ֆեդերացիայի ղեկավարությունը շարունակում է բանակցությունները եւ բացառված չէ, որ հավաքականի նոր գլխավոր մարզչի անունը հայտնի դառնա մինչեւ մրցաշարի մեկնարկը:

Ինչպես հայտնի է, ՀՀ հավաքականն այս տարի մեկնարկելու է 2010-ի աշխարհի առաջնության ընտրական մրցաշարում: Մեկնարկը տրվելու է սեպտեմբերին: Ի դեմ, օրերս ընտրական 5-րդ խմբում ընդգրկված երկրների ներկայացուցիչները Բարսելոնում քննարկել են ընտրական մրցաշարի խաղացանկը: Նման քննարկման ժամանակ սովորաբար յուրահանչյուր երկիր ներկայացնում է խաղացանկի իր տարբերակը: Ինչպես տեղեկացանք ՀՖԲ մամուլի քարտուղարությունից, քննարկման արդյունքում կողմերը համաձայնության չեն եկել: Նման դեպքերում խաղացանկը որոշվում է վիճակահանությամբ, որի արարողությունը պետք է տեղի ունենա հունվարի 16-ին, Ցյուրիխում:

Ինչ խոսք, Մալթայի մրցաշարը մեր ֆուտբոլիստների համար ուժերի հիանալի սուղագտնս կդառնա ընտրական մրցաշրջանից առաջ: Վերջին տարիներին ֆուտբոլի Ֆեդերացիայի ջանքերով մեր հավաքականի համար կազմակերպվում են մրցաշրջագայություններ, ընկերական հանդիպումներ, որոնք նպաստում են ֆուտբոլիստների խաղակցվածությանը, հավաքականի կազմի ճիշտ ընտրությանը: Կարծում ենք, որ այս առումով բացառություն չի լինի նաեւ Մալթայի մրցաշարը: Փետրվարի 6-ը ՖԻՖԱ-ի խաղացանկով հավաքականների համար ընկերական մրցախաղերի անցկացման օր է, ուստի կարելի է հուսալ, որ մեր ընտրանու կազմում Մալթայում հանդես կգան նաեւ լեգեոնականները:

Ֆուտբոլասերներին տեղեկացնենք, որ մեր հավաքականը ժամանակին բոլոր երեք մրցակիցների հետ էլ մրցել է: Առավել հաջող մեր ֆուտբոլիստները խաղացել են Մալթայի ընտրանու հետ: Առաջին հանդիպումը կայացել է 1994-ի հուլիսի 16-ին, Երեւանում: Ընկերական այդ մրցախաղի ելքը վճռեց հանդիպման 64-րդ րոպեին Արսեն Ավետիսյանի խփած միակ գոնակը: Ի դեմ, դա մեր ընտրանու խփած առաջին գոլն ու տարած անդրադարձիկ հաղթանակն էր:

Մրցակիցների հաջորդ հանդիպումը տեղի է ունեցել անցյալ տարվա սեպտեմբերի 12-ին Լա Վալետայում: Ընկերական այդ մրցախաղում էլ հայ ֆուտբոլիստները հաղթեցին շնորհիվ 26-րդ րոպեին Արթուր Ոսկանյանի խփած միակ գոլի: Հարկ է նշել, որ այդ խաղից չորս օր առաջ Մալթայի ընտրանին Եվրո-2008-ի ընտրական մրցաշարի խաղում ոչ-ոքի (2-2) էր խաղացել Թոստիայի հավաքականի հետ:

Իսլանդիայի եւ Բելառուսի հավաքականների հետ մեր ֆուտբոլիստները նախկինում հանդիպել են ընտրական մրցաշարի շրջանակներում: Իսլանդացիների հետ անդրանիկ հանդիպումը կայացել է 1998-ի հոկտեմբերի 10-ին Երեւանում: Եվրոպայի առաջնության ընտրական այդ մրցախաղում դարձյալ մնացել են անառիկ: Հաջորդ տարվա հունիսի 5-ին կայացած պատասխան խաղում մեր ընտրանին մրցակցին զիջեց 0-2 հաշվով:

Բելառուսի հավաքականի հետ հանդիպումները կայացել են 2002-ի աշխարհի առաջնության ընտրական մրցաշարի շրջանակներում: Առաջին հանդիպումը կայացել է 2000-ի հոկտեմբերի 11-ին Մինսկի «Դինամո» մարզադաշտում եւ ավարտվել է դաշտի տերերի հաղթանակով (2-1): Այդ խաղում արդեն առաջին խաղակեսում խացկեփչն ու Ռինդյունը գրավեցին Հարությունն Աբրահամյանի պատասխանած դարձյալ: Ընդհանրությունից միայն Ֆելիքս Խոջոյանը կրճատեց հաշվի տարբերությունը: 2001-ի հունիսի 2-ին Երեւանում կայացած խաղում հաշիվը չբացվեց:

Արտերկրում հետաքրքրվում են հայ ֆուտբոլիստներով

Հայաստանի ֆուտբոլիստների համար ներկայում նոր մրցաշրջանի նախապատրաստության եռուն շրջանն է: Նրանցից ոմանցով հետաքրքրվում են արտերկրի թիմերը: Այնպես որ բացառված չէ, որ հայ ֆուտբոլիստներից ոմանք համալրեն արտերկրների թիմերի կազմերը:

Մենք արդեն տեղեկացրել ենք, որ ՀՀ հավաքականի եւ «Փյունիկի» պաշտպան Ռոբերտ Արզումանյանով հետաքրքրվում է դանիական «Բրոնդբյուն»: Առայժմ Արզումանյանը մարզվում է «Փյունիկում»: Իսկ ահա ՀՀ հավաքականի եւ «Արարատի» կիսապաշտպան Արթուր Ոսկանյանը մեկնել է Բելառուսի «Վիտեբսկ», որի կազմում փորձաշրջան կանցնի: Բելառուսական թիմերը հետաքրքրվում են նաեւ փյունիկցիներ Արկան Մկրտչյանով ու Ալեքսանդր Թադեւոսյանով, որոնք հնարավոր է դեռեւս մեկնեն փորձաշրջանի: Իսկ Հայաստանի 2007-ի լավագույն ֆուտբոլիստ Լեւոն Փաչաջյանը գրավել է Շվեդիայի թիմերի մարզիչների ուշադրությունը: «Բանանց» ակումբից էլ տեղեկացանք, որ Արարատ Առաքելյանի եւ Սամվել Մելիքյանի ծառայություններով հետաքրքրվում է Գերմանիայի բունդեսլիգայի «Վոլֆսբուրգը»:

Առայժմ հայտնի չէ, թե որտեղ հանդես կգա 2007-ի ՀՀ առաջնության լավագույն ռմբարկու Մարկոսը: Ըստ բելառուսական լրատվամիջոցների, նրանով հետաքրքրվում էր ԲԱՏԷ-ն: Բրազիլացի շնորհալի ֆուտբոլիստը հայտնվել է նաեւ ավստրիական եւ ուկրաինական ակումբների ուշադրության կենտրոնում: Նշենք, որ Մարկոսը մինչեւ 2009-ը պայմանագիր ունի «Արարատի» հետ: Անցած տարվա հիանալի ելույթներն արժանացել էին նաեւ ՀՀ հավաքականի մարզիչների ուշադրությանը: Մարկոսն արդեն 2 տարի Հայաստանում է բնակվում ու հանդես գալիս, ուստի ընթացիկ մրցաշրջանում իրավունք ունի հանդես գալու մեր ընտրանում: Կարծում ենք, որ չարժե շտապել Մարկոսին արտերկիր ուղարկելու հարցում: Հայաստանի հավաքականում հանդես գալը կնպաստի բրազիլացի ֆուտբոլիստի վարկանիշի եւ տրանսֆերային գնի աճին: Այդ դեպքում «Արարատը» հնարավորություն կունենա ավելի շահավետ պայմաններով վաճառել բրազիլացուն:

Ղազախստանի «Կայսարը» փորձաշրջանի է հրավիրել «Բանանցից» հեռացած Արամ Հակոբյանին, «Միկայի» դարձյալ պատասխան Ֆելիքս Հակոբյանին եւ «Գանձասարում» վարձավճարով հանդես եկած Վալերի Ալեքսանյանին:

Կաուֆմանի հաշվարկներով չեմպիոն կդառնան իտալացիները

Շվեյցարիայի ադամանդագրական գործակալություններից մեկի աշխատակից Ռոգեր Կաուֆմանը հայտնի է որոշ ճիշտ գուշակություններ կատարող: Նա նման արդյունքի է հասնում մաթեմատիկական բարդ հաշվարկների շնորհիվ: Նա փորձել է գուշակել նաեւ Եվրո-2008-ի արդյունքները: Ըստ նրա հաշվարկների, եզրափակիչում չեմպիոնի տիտղոսը կվիճարկեն Իտալիայի եւ Գերմանիայի հավաքականները: Իտալացիների եզրափակիչ մտնելու հավանականությունը 28,8 տոկոս է, գերմանացիներինը՝ 24,9: Չեմպիոն կհռչակվի Իտալիայի հավաքականը (17,6 տոկոս): Մնում է սպասել ամռանը եւ համոզվել, թե որքանով են ճիշտ Կաուֆմանի հաշվարկները:

ՍՊՈՐՏ

Պետրոսյանը շարունակեց հաղթարշավը

Շախմատի Հայաստանի տղամարդկանց առաջնությունում գերազանց է մեկնարկել Տիգրան Պետրոսյանը: Երեկ կայացած երրորդ տուրում Պետրոսյանը երրորդ անընդմեջ հաղթանակը տոնեց՝ սպիտակներով պարտության մատնելով Արսեն Եղիազարյանին: Շարունակելով հաղթարշավը, Տիգրանը 100 տոկոսանոց արդյունքով միանձնյա գլխավորում է մրցաշարային աղյուսակը:

Բավական հաջող է հանդես գալիս մրցաշարի ամենակրտսեր մասնակից, վանաձորցի ՖԻԴԵ-ի վարպետ Սամվել Տեր-Սահակյանը, որը մրցաշարում երկրորդ հաղթանակը տոնեց՝ առավելության հասնելով Արման Փաշիկյանի նկատմամբ: Սամվելը երեք հնարավորից վաստակել է 2,5 միավոր: Ընդհանրապես երրորդ տուրը շատ արդյունավետ էր: Կայացած վեց պարտիաներից միայն մեկն ավարտվեց ոչ-ոքի: Երրորդ անգամ անընդմեջ հաջողություն կնվեց Սմբատ Լիսուրյանը, որի մրցակիցը Դավթեն Անդրեասյանն էր: Մնացած պարտիաներում հաջողությունն ուղեկցեց սպիտակ խաղաքարերով խաղացող շախմատիստներին: Առաջատար եւ Արա Մինասյանները հաղթեցին համապատասխանաբար Տիգրան Քոթանջյանին եւ Տիգրան Նալբանդյանին ու վաստակեցին 2,5-ական միավոր: Առաջին հաղթանակը տոնեց փորձառու Ատոմ Անդասյանը՝ պարտության մատնելով երիտասարդ միջազգային վարպետ Լեւոն Բաբուջյանին: Վերջինս, ինչպես եւ Տիգրան Նալբանդյանն ու Տիգրան Քոթանջյանը, միավոր չի վաստակել: Երկու միավոր ունի Անդրեասյանը, 1,5-ական՝ Լիսուրյանն ու Ասրյանը, 1-ական՝ Փաշիկյանն ու Անդասյանը: Իր օգտին կես միավոր է գրանցել Եղիազարյանը:

Այսօր կայանալիք չորրորդ տուրում առաջատարը սեւերով կմրցի Արման Փաշիկյանի հետ: Տեղի կունենան նաեւ Եղիազարյան-Անդասյան, Նալբանդյան-Տեր-Սահակյան, Լիսուրյան-Արա Մինասյան, Քոթանջյան-Անդրեասյան եւ Ասրյան-Արատես Մինասյան պարտիաները:

Մրցաշարում երկիբխանություն է

Կարեն Մովսիսյանը շարունակում է հաջող մրցելույթները Սեփիլիայի շախմատի մրցաշարում: 6-րդ տուրում հայ գրոսմայստերը սպիտակներով հաղթեց Վլադիմիր Բուտմակիհին եւ վաստակելով 5,5 միավոր, հավասարվեց իսրայելացի Մանուել Լոթեսին: Վերջինս, որ մինչ այդ հաղթանակով էր ավարտել բոլոր պարտիաները, ոչ-ոքի ավարտեց մրցավեճը Իսպանիան ներկայացնող ուզբեկ գրոսմայստեր Իբրահիմ Խամրակուլովի հետ: Այսպիսով, 6 տուրից հետո մրցաշարում երկիբխանություն հաստատվեց: 8 շախմատիստ 5 միավորով հետապնդում են առաջատարներին:

7-րդ տուրում Մովսիսյանի մրցակիցը կլինի իսպանացի Լոթեսը: Այդ մրցախաղի արդյունքը շատ բանով կկանխորոշի հաղթողի հարցը: 5 միավոր ունեցող շախմատիստներն էլ կմրցեն միմյանց հետ:

Նալբանդյանի մասնակցությունը կասկածի տակ է

Արգենտինահայ թենիսիստ Դավիթ Նալբանդյանի մասնակցությունը հունվարի 14-ին մեկնարկող թենիսի Ավստրալիայի բաց առաջնությանը կասկածի տակ է: Արգենտինացի թենիսիստն օրերս Մարաս Սաֆինի հետ Մելբուռնի կորտում մարզվելիս վնասվածք է ստացել: Նա մեջքի սուր ցավեր է ունեցել: Բժիշկները նրան խորհուրդ են տվել 3-4 օր հանգստանալ: Դեռեւ վնասվածքի պատճառով Նալբանդյանը չմասնակցեց Kooyong Classic մրցաշարին:

Մարադոնային կողոպտեցին

Արգենտինացի նախկին հանրահայտ ֆուտբոլիստ Դիեգո Մարադոնան խոշոր կողոպուտի զոհ է դարձել: Նրա շարժական թանգարանից առեւանգվել են ավելի քան 600 ցուցանմուշներ, այդ թվում 1986-ի աշխարհի առաջնության լավագույն ֆուտբոլիստի համար ստացած մրցանակը, «Ոսկե խաղակոշիկը», Պելեի նվիրած գոտին, Ֆրեդի Կաստրոյի նվերները եւ այլ մրցանակներ: Ոստիկանությունը սկսել է հետաքննությունը: Առայժմ հիմնական կասկածյալը Մարադոնայի ցուցահանդեսի կազմակերպիչն է: Վերջինս պետք է անվանի ֆուտբոլիստի անձնական իրերի եւ մրցանակների ցուցահանդեսներ կազմակերպեր Իսպանիայում, Մեքսիկայում, Գերմանիայում եւ Արգենտինայում:

Ձիդանը վերադարձավ «Ռեալ»

Մադրիդի «Ռեալի» երկրպագուների երազանքն իրականացավ: Նրանց կուռքը՝ Զինեդին Զիդանը վերադարձավ արհայական ակումբ: Ինչպես եւ խոստացել էր ֆրանսիացի հանրահայտ նախկին ֆուտբոլիստը, նա ակումբի մանկապատանեկան դպրոցում կատարած որոշես մարզիչ:

Համատեղ հայտ

Իսպանիան ու Պորտուգալիան մտադիր են 2018-ի աշխարհի առաջնության անցկացման համատեղ հայտ ներկայացնել: Այս մտահղացմանը հավանություն են տվել երկու երկրների իշխանությունները: Հիշեցնենք, որ Պորտուգալիայում 2004-ին անցկացվել է ֆուտբոլի Եվրոպայի առաջնությունը, որում դաշտի տերերը եզրափակիչում զիջեցին հույներին: Իսկ Իսպանիան 1982-ի ֆուտբոլի աշխարհի առաջնության կազմակերպիչն էր:

Էջը պատրաստեց ԱՐՈՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Բուշի շրջայցը պայմանավորվում է պաղեստինա-իսրայելական ...

1-ին էջից

Նրան ի պաշտոնե, վարչապետ Օլմերտն ասել է, որ Իսրայելը շաբաթը է վերաբերվում Պաղեստինի պետության ստեղծումը նախատեսող խաղաղության «Ուղեգիծ» ծրագրի կիրառմանը: Նա միաժամանակ խոստացել է Բուշին, որ հրաժարվելու է բնակավայրեր չեն կառուցել Այսհոդանամում: Օլմերտը դրանով, փաստորեն, ընդառաջել է ԱՄՆ նախագահի ներկայացրած պահանջին:

Ռամալլայում Մահմուդ Աբբասի հետ հանդիպմանը նախագահ Բուշը հույս է հայտնել, որ միջինարևելյան խաղաղ կարգավորման պայմանագիրը կստորագրվի 2009-ի հունվարին եւ վերջապես կիրականանա Պաղեստին անկախ պետությունը: Աբբասն իր հերթին նշել է, որ ԱՄՆ նախագահի այցը հույս է ներշնչում պաղեստինցիներին: Սակայն այդ հույսը չի խանգարել Աբբասին, որ նա Բուշին խնդրի Իսրայելին հետ պահել նոր հարձակումներից:

Իսրայելին հարձակումներից հետ պահելու հարցում Աբբասը նկատի ունեցել է առյուծ Գազայի հատվածը, չգիտենք: Բայց այդ հարձակումները հունվարի 7-ին նոր թափ էին ստացել, զուգընթաց դրան տեղի էր ունեցել Հորոգի ներքոյի մոտ ամերիկյան երեք ռազմանավերի եւ իրանական 5 առագաստանավերի հետ կռված տիեզ միջադեպը: Իսկ հունվարի 8-ին Լիբանանում ականի պայթյունից առնվազն 2 խաղաղապահ իտալացի զինվորներ վիրավորվել էին:

Այլ կերպ, երեւաբերում եւ Ռամալլայում Ջորջ Բուշի ելույթը, առավել եւս նրա շրջագայության պաղեստինա-իսրայելական խաղաղ կարգավորման գործընթացը խթանելու, ինչպես նաեւ Իրանի դեմ Քուվեյթի, Բահրեյնի, Արաբական Միացյալ Էմիրությունների, Սաուդյան Արաբիայի եւ Եգիպտոսի պես արաբական երկրներին հանախմբելու առաջադրությունը, որքա, ի դեպ, ընդգրկված են շրջայցի ծրագրում, լուրջ հիմքեր են տալիս ենթադրելու, որ ԱՄՆ նախագահը Պաղեստինի անկախ պետության ստեղծմանը նպաստելու պատասխանատվությամբ ընդամենը նախադրյալներ է ստեղծում խորացնելու տարաձայնությունը տարածաշրջանի երկրների միջեւ առկա բեւեռացումը:

Սիա թե ինչու Գազայում «Համաս»-ի նման բողոքի, ցույցեր է կազմակերպում Բուշի շրջայցի դեմ, իսկ պաշտոնական Դամասկոսը հայտարարում է, որ ԱՄՆ նախագահի շրջագայությունը տարաձայնություն է ծախողման: Ըստ Դամասկոսի, Ջորջ Բուշը շրջայցով տարածաշրջան է ժամանել ոչ թե նպաստելու պաղեստինա-իսրայելական խաղաղ կարգավորման գործընթացին, այլ Իսրայելին ավելի մեծ աջակցություն ցուցաբերելու, արաբական դիմադրությունը թուլացնելու եւ արաբների հարաբերությունները Իրանի հետ փչացնելու նպատակներով:

Այս ամենի առումով, սիրիական իշխանություններին է հավելել «Համասը», ընդգծելով, որ նախագահ Բուշի բուն նպատակը պաղեստինյան դաշին վերջնական հարվածը հասցնելն է եւ նպաստելը իսրայելական ագրեսիայի առմասակալմանը Պաղեստինի տարածում: Համենայն դեպս, տարաձայնությունը ստեղծված իրավիճակը, անկախ Բուշի շրջագայության վերջնարդյունքներից, թերեւ առաջադրանքից, բարենպաստ է ոչ թե միջինարեւելյան խաղաղ կարգավորման գործընթացը խթանելու, այլ տարաձայնների երկրների հեռագա բեւեռացումը խորացնելու համար: Կասկածից վեր է, որ խորացման պայմաններում հնարավոր կդառնա Իրանում ծավալվող շիաստանների բախումներին հաղորդել միջազգային բնույթ: Այսպիսով, Վաշինգտոնը կիրականացնի Սաուդյան Արաբիայի գլխավորած արաբական երկրներին Իրանի դեմ հանելու վաղեմի երազանքը:

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ: ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՐԱՎԵՐ

Պետական կառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների եւ լրատվամիջոցների դերը կոռուպցիայի դեմ պայքարում

Եվրոպա հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչությունը հրավիրում է փորձառու մասնագետների եւ կազմակերպությունների մասնակցելու տեղական ինքնակառավարման մարմինների համար նախատեսված դասընթացների անցկացման մրցույթին: Դասընթացի թեմաներն են.

- Հակակոռուպցիոն/հակախոտանային ռազմավարության ու ընթացակարգերի մշակում
- Թափանցիկ բյուջե
- հարթախության, յարաբահումների հայտնաբերում ու կանխում:

Հայտը.

Հայտը կարող է ներկայացվել անգլերեն կամ ռուսերեն լեզուներով էլեկտրոնային տարբերակով եւ պետք է ներառի հետեւյալը՝

- Կարիքների նախնական գնահատման հարցաթերթիկի կամ հարցադրույցի ուղեցույցի օրինակ.
- Սեպտեմբերի նկարագիր (նեռայալ տեղեկություններ դասընթացի մասին, մեթոդների, դասընթացի անցկացման մեթոդի, գնահատման եւ եզրափակիչ հաշվետվության մասին),
- Գործողությունների նախատեսված ժամանակացույցը,
- Մանրամասն բյուջե՝ բաժանված ըստ գործողությունների,
- Դասընթացի նախապատրաստման ու անցկացման համար պատասխանատու փորձագետների կենսագրությունը՝ նախկին նմանատիպ փորձի նկարագրությամբ,
- Առնվազն երկու եռաբնակագիր:

Աշխատանքային նկարագիրը եւ տեխնիկական առաջադրանքները կարող եք գտնել Հիմնադրամի կայքէջում՝ www.eurasia.am

Մասնակցության չափանիշները

Հայտեր կարող են ներկայացնել հետեւյալ չափանիշներին բավարարող կազմակերպությունները կամ անհատները.

- Առնվազն հինգ տարվա հաստատությունը փորձ դասընթացների վարման կամ ԱՄԿ երկրներում ՏԻՄ մակարդակում օրինակելի հակակոռուպցիոն ռազմավարությունների իրականացման ոլորտում
- Դասընթացը հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով անցկացնելու կարողություն
- Նշված ժամկետներում դասընթացներն անցկացնելու հնարավորություն:

Ընտրությունը

Հայտի էլեկտրոնային տարբերակը ռուսերեն կամ անգլերեն լեզուներով պետք է ներկայացվի Եվրոպա հիմնադրամի հայաստանյան գրասենյակ հետեւյալ էլ-փոստով eurasia@eurasia.am՝ նամակի թեմայի փոխարեն նշելով «Anticorruption Training Bid» արտահայտությունը: Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 2008թ. հունվարի 25-ը: Հայտերը դիտարկելու է հատուկ հանձնախումբը:

Ընտրությունը կիրականացվի ելնելով հետեւյալ չափանիշներից.

- Դասընթացի մեթոդաբանության առաջնահերթությունը
- Համապատասխան ոլորտում փորձագետների փորձառությունը
- Ներկայացված եռաբնակագրերը
- Հայտի բյուջեի հիմնավորվածությունը:

Եվրոպա հիմնադրամը հայտատուներին կտեղեկացնի մրցույթի վերջնական արդյունքների մասին մինչեւ սույն թվականի փետրվարի 5-ը:

Լրացուցիչ տեղեկությունների կամ պարզաբանումների համար կարող եք դիմել Եվրոպա հիմնադրամի ծրագրերի համակարգող Մարինա Մխիթարյանին, հեռ. +374 10 58-60-95, էլ-փոստ՝ marina@eurasia.am կամ ծրագրերի օգնական Իրինա Փահլեւանյանին էլ-փոստ՝ irina@eurasia.am .

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

[illegible]

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

[illegible]

Գրանցվել է բանկի նոր մասնաճյուղ

Կենտրոնական բանկի նախագահի 2007թ. դեկտեմբերի 29-ի թիվ 1/1627 Ա որոշմամբ գրանցվել է «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ «Կիեւյան» մասնաճյուղը:

ԿԲ մամուլի ծառայություն

Փետրվարի 8-ին ժամը 14-ին 11 բնակարանների նախագծարարությունը. «Մեղամոր» ՓԲԸ-ն, Գեղարուեստների մարզի Գեղանանի գյուղատնտեսական կազմակերպում են հասարակական լսումներ Գեղարուեստների մարզի Գեղանանի համայնքի գյուղական բնակավայրում գտնվող «Մեղամոր» ՓԲԸ-ի ԱԷԿ կայանի տրանսպորտային վրա ազդեցության վերաբերյալ: Նախագծային փաստաթղթերին կարող է ծանոթանալ երեքշաբթի, հունվարի 29 հասցեում:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ավանդների հաստատումը երաշխավորող հիմնադրամը հայտարարում է բաց մրցույթ թափուր աշխատատեղի համար

Աշխատատեղի անվանումը՝ Տնտեսագետ

Աշխատանքի նպատակը՝ Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական անձանց բանկային ավանդների երաշխավորման համակարգի ամրապնդման եւ զարգացման նպատակով ավանդների հաստատումը երաշխավորող հիմնադրամի գործառույթների ապահովում, բանկերի կողմից ներկայացվող հաշվետվությունների ուսումնասիրում եւ սեղմում, հիմնադրամի միջոցների, ռիսկերի վերլուծություն:

Հաշվետու է հիմնադրամի տնօրենին

Պարտականությունները.

1. Առեւտրային բանկերի կողմից երաշխիքային վճարների եւ կարգով սահմանված հաշվետվությունների ստացում, ավանդների երաշխավորման համակարգին առնչվող հիմնական ցուցանիշների վերլուծություն:
2. Հիմնադրամի միջոցների եւ պարտավորությունների կառավարում, այդ թվում հիմնադրամի կողմից ստացվող վարկերի եւ դրամաշնորհների ստացման եւ դրանց տրամադրման հետ կապված աշխատանքներ:
3. Ակտիվների կառուցվածքի, ժամկետայնության, եկամտաբերության վերլուծություն, համեմատում ուղեցուցային պայմանների հետ, ինչպես նաեւ դրանց վերաբերյալ հաշվետվությունների պատրաստում:
4. Ավանդների հաստատումը երաշխավորող հիմնադրամի գործունեությանը առնչվող փաստաթղթերի նախագծերի պատրաստում:
5. Ֆինանսական գործառնությունների նկատմամբ հսկողության համակարգի հետ կապված աշխատանքներ:
6. Բանկի անվճարունակության կամ սնանկության դեպքում ֆիզիկական անձանց բանկային ավանդների հաստատման գործընթացի կազմակերպում.
7. Ղեկավարի կողմից տրված լրացուցիչ հանձնարարականների կատարում:

Պահանջները

Կրթությունը.	Մասնագիտական փորձը
Բարձրագույն-Տնտեսագիտական	2 տարի
Բարձրագույն- ոչ մասնագիտական	3 տարի

Գիտելիքները (ընդգծվածը, խորությունը)

- Բանկային օրենսդրական եւ նորմատիվային դաշտի տիրապետում (խորացված),
- Մակրոտնտեսագիտության (խորացված),
- Ռիսկերի կառավարում (միջանկյալ),
- Ֆինանսական կառավարում (միջանկյալ),
- Հաշվապահություն (նեռաբական),
- Բանկային գործ (նեռաբական),
- Հայերեն լեզվի իմացություն
- Անգլերեն եւ ռուսերեն լեզուների իմացություն (հաղորդակցվելու, մասնագիտական գրականություն ընթերցելու նպատակով)

Հմտությունները

Համակարգչով աշխատելու հմտություն (MS Office)

Մրցույթին մասնակցել ցանկացողները մինչեւ հունվարի 25-ը կարող են դիմել Ավանդների հաստատումը երաշխավորող հիմնադրամ (Վ. Սարգսյան 6, 33 կենտրոնական բանկի տեղում) ներկայացնելով հետեւյալ փաստաթղթերը.

- ինքնակենսագրություն (տեղյուսն)
- անձնագրի պատճենը
- սոցիալական քարտի պատճենը
- դիպլոմի եւ դիպլոմի միջուկի պատճենները
- գինգրոսի պատճենը (առկան սեռի դիմորդների համար):

Հեռախոսահամարներ՝ 583514, (ներքին) 2528, 2526:

էլեկտրոնային հասցե՝ adgf@cba.am; info@adgf.am

Ինտերնետային կայք՝ www.adgf.am

Մրցույթի հրավեր - 002/08

ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը հայտարարում է մրցույթ՝

«ՄԱԶԾ Հայաստանյան գրասենյակը հայտարարում է մրցույթ Ազգային փրկարար ծառայության հասարակության հետ կապերի վարչության ինտերնետ էջի ստեղծում եւ սպասարկում»: Ցանկացողները կարող են սանձալ մրցույթին մասնակցելու բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը՝ այցելելով ՄԱԶԾ-ի հայաստանյան գրասենյակ՝ Պետրոս Ադամյան 14 փ., դիմել Գրիգոր Սինոյանին՝ 56 60 73 լ. 126, ժամը 14:00-ից մինչեւ 16:00:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2008, 24 հունվարի, ժամը 17:00:

Մրցույթի հրավեր - 004/08

ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը հայտարարում է մրցույթ՝

«ՄԱԶԾ Հայաստանյան գրասենյակը հայտարարում է մրցույթ Արարատի մարզում բնական աղետների ռիսկերի, խոցելիության ու տեղական ինքնավարությունների ուսումնասիրություն» թեմայով: Ցանկացողները կարող են սանձալ մրցույթին մասնակցելու բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը՝ այցելելով ՄԱԶԾ-ի հայաստանյան գրասենյակ՝ Պետրոս Ադամյան 14 փ., դիմել Գրիգոր Սինոյանին՝ 56 60 73 լ. 126, ժամը 14:00-ից մինչեւ 16:00:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2008, 29 հունվարի, ժամը 17:00:

Մրցույթի հրավեր - 001/08

ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը հայտարարում է մրցույթ՝

ՄԱԶԾ Հայաստանյան գրասենյակը հայտարարում է մրցույթ **«Արարատի մարզում բնական աղետների ռիսկերի ուսումնասիրություն»** թեմայով: Ցանկացողները կարող են սանձալ մրցույթին մասնակցելու բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը այցելելով ՄԱԶԾ-ի հայաստանյան գրասենյակ՝ Պետրոս Ադամյան 14 փ., դիմել Գրիգոր Սինոյանին՝ 56 60 73 լ. 126, ժամը 14:00-ից մինչեւ 16:00:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2008, 29 հունվարի; ժամը 17:00:

ՀՈՎԱՅԴԻ ՀԱՄԱՐ ՅԱՆԵՑԱՇԱՐԵԼ՝ 56-29-60

Լուսանկարները տրամադրեցին՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.: Հոդվածների պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Անթիփեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրած է տպագրության՝ 10.01.2008, գինը՝ 100 դրամ, տպագրվում է «Տիգրան Մեծ» հասարակության տպարանում՝ Արտակոնյաց 2: